

ԱՅՍ ԹԻՒՈՎ

Արտաքին սպառնալիքը իր նոր ժանիքներով... էջ 4

Տիարալեքիրէն կրնայ առաջադրուիլ հայ թեկնածու , էջ 4

«Justifying Genocide: Germany and the Armenians from Bismarck to Hitler» գիրքի ներկայացում, էջ 5

Տանկահայ Գաղթաշարժը Եւ Անոնց Դերը Հայաստանի Հանրապետութեան Կազմութեան Մէջ - ԺԶ., էջ 6

Մէկ Նիկոլով գարուն չի գար, էջ 7

Պիտի Ծարունակեք Ծառայել Ամբողջ Լիբանանահայութեան, էջ 7

Երիտասարդ Ընտանիքին Աստուածաշունչը, էջ 8

Թուրքիոյ Խորհրդարանը Մերժեց Փայլանի՝ Հայոց Ցեղասպանութեան Ծանաչման Պահանջով Օրինագիծը

Թուրքիոյ խորհրդարանի նախագահ Իսմայիլ Գահրաման պատասխանեց ընդդիմադիր եւ քրտամէտ ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութեան անդամ եւ խորհրդարանի հայազգի պատգամաւոր Կարօ Փայլանի՝ Հայոց Ցեղասպանութիւնը ճանչնալու եւ անոր գոհերու ժառանգորդներուն քաղաքացիութիւն շնորհելու մասին դիմումին:

Քահրաման յայտարարեց, որ նման պահանջի մը կատարումը կը հակասէ թուրք ժողովուրդին ազգային դիտակցութեան ու պատմութեան: Խորհրդարանի նախագահութիւնը նաեւ մեղադրեց հայազգի պատգամաւորը՝ «թուրք ժողովուրդի անցեալն ու Թուրքիոյ պետութիւնը վիրաւորելով՝ խորհրդարանի կանոնակարգի 67րդ կէտը խախտելուն համար»:

Նախագահութիւնը մերժեց Փայլանի առջարկած օրինագիծը եւ ետ ուղարկեց զայն պատգամաւորին՝ «անհրաժեշտ ուղղումներ» իրականացնելու համար:

Իր օրինագիծով, Փայլան մասնաւորապէս պահանջած էր ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը, բացառել հասարակական վայրերը ոճրագործներու անուններով կոչելը ու քաղաքացիութիւն շնորհել Ցեղասպանութեան զոհ գացած կամ անկէ տուժած հայերու ժառանգորդներուն:

«Ցեղասպանութենէն ետք ողջ մնացած հայերը 103 տարիէ կը պայքարին իրենց գլխուն եկած ողբերգութեան հետ կապուած արդարութիւնը վերականգնելու համար: Սակայն, Ցեղասպանութենէն տուժած միլիոնաւոր հայեր արդէն իսկ հրաժեշտ տուած են կեանքին՝ առանց ճաշակելու արդարութեան հասնելու զգացումը: Այն վայրը, ուր պէտք է քննարկուի Հայոց Ցեղասպանութիւնը, Թուրքիոյ խորհրդարանն է. երբ այդ կատարուի՝ Հայոց Ցեղասպանութիւնը պիտի դադրի այլ երկիրներու խորհրդարաններուն մէջ քննարկուելիք հարց դառնալէ», ըսած էր Փայլան:

Գանատայի Հայոց Թեմի Ազգային Երեսփոխանական 60/17-րդ Ժողովը աւարտեց իր աշխատանքները



Կարդալ էջ 5

ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սուէ» մասնաճիւղը ոգեկոչեց իր հիմնադրման 60-ամեակը



Կարդալ էջ 5



Komitas.ca
FUNERAL COMPLEX

Always standing by our community

PRE-PLANNING WITH 0% INTEREST
1, 3, 5 OR 10 YEAR PAYMENT PLANS

5180 Salaberry, Montreal, QC H4J 1J3
T 514.331.0400



2018 PILOT MSRP STARTING FROM \$40,390*

2018 PILOT SHOWN

* Taxes not included. Visit Honda Gabriel for more details.

HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4


514 327-7777
www.hondagabriel.com

Kevorg Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian



HONDA

Les saveurs de la méditerranannée...
le bon goût du partage !



Suivez-nous !



www.groupeadonis.ca



MARCHÉ

ADONIS

ՀՕՄ-ի Մոնթրեալի «Սուէ» մասնաճիւղը ոգեկոչեց իր հիմնադրման 60-ամեակը



Կիրակի, 6 Մայիս 2018-ին, Ս. Յակոբ Ազգ. Վարժարանի «Բաստրմաճեան» սրահէն ներս տեղի ունեցաւ ՀՕՄ-ի Մոնթրեալի «Սուէ» մասնաճիւղի հիմնադրման 60-ամեակի տօնակատարութիւնը, բարձր հովանաւորութեամբ Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարգէն Արք. Չարեանի, նախագահութեամբ մասնաճիւղի հիմնադիր վարչական անդամ ընկհ. Սիլվա Սայլըքի, ներկայութեամբ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան ատենապետուհի ընկհ. Անի Օհանեանի, հոգեւոր հայրերու, Լաւալի եւ Օթթաուայի քոյր մասնաճիւղերու, գաղութէն ներս գործող պատկան մարմիններու եւ միութեանց ներկայացուցիչներու, ՀՕՄ-ի ընկերուհիներու եւ բարեկամներու:

«Մեր հայրենիք» եւ ՀՕՄ-ի գոյք քայլերգներու ունկնդրումէն ետք, օրուան հանդիսավար ընկհ. Լեւակ Ոսկեան ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս յարգելու մեզմէ առյաւէտ բաժնուած ընկերուհիներուն եւ բարերարներուն յիշատակը: Ընկերուհի Լեւակ իր բարի գալուստի խօսքէն ետք բեմ հրաւիրեց «Սուէ» մասնաճիւղի վարչութեան ատենապետուհի ընկհ. Լիւսի Շահինեանը:

Ընկհ. Շահինեան իր սրտի խօսքը փոխանցելէ ետք ներկայացուց օրուան նախագահուհի, ՀՕՄ-ի Մոնթրեալի մասնաճիւղի հիմնադիր վարչութեան անդամ ընկերուհի Սիլվա Սայլըքի կենսագրականը եւ զինք բեմ հրաւիրեց, յանձնեց ծաղկեփունջ մը՝ առ ի երախտագիտութիւն իր տարած աշխատանքին: Ընկհ. Սայլըք նախ յիշեց առաջին վարչութեան իր ընկերուհիները, ապա շեշտեց, թէ հիմնադիր ըլլալը գոյուար չէ, սակայն հիմնելէ ետք պահելն ու ունեցնելն է էականը:

Անկէ ետք ընկհ. Լիւսի յաջորդաբար բեմ հրաւիրեց մասնաճիւղի հիմնադիր վարչական անդամներու ընտանեկան պարագաները. ընկհ. Մարի Գաբրիէլեանին գաւազները՝ ընկհ. Իսկուհի Փոլատեանն ու Պետրոս Գաբրիէլեանը, ընկհ. Արաքսի Պոյաճեան Այնթապեանի դուստրը՝ ընկհ. Բրիտի Սյնթապեան Մարգարեանը, ընկհ. Մարի Առաքելեանի թոռնիկը՝ Մայք Կիրակոսեանը, որոնց յանձնեց ծաղկեփունջեր: Ընկերուհին իր խօսքը աւարտեց ըսելով. «Ճարգանքի խօսք կ'ուզեմ

ուղղել մեր մայրերուն եւ մեծ մայրերուն, որոնք յաջողած են մեզի փոխանցել կամաւոր աշխատանքի գիտակցութիւնն ու սէրը՝ շարունակելու ՀՕՄ-ի հիմնադիրներուն աւանդը սերունդէ սերունդ»:

Ընկհ. Շահինեան սահիկներու ցուցադրութեամբ նախ ներկայացուց մասնաճիւղի 2017-2018 տարեշրջանի նիւթական ընդհանուր յատկացումի գումարը՝ \$ 183,831.00, ապա անդրադարձաւ Մոնթրեալի մասնաճիւղի 60 տարիներու ընթացքին կատարած ընդհանուր նիւթական յատկացումներուն, որուն ընդհանուր գումարը մինչեւ օրս հասած է \$3,248,472.00-ի: Ան հաստատեց, թէ ՀՕՄ-ի ջանք արդարօրէն փոխանցուած է իր երիտասարդ անդամներուն, որոնք կը շարունակեն իրենց փոխանցուած գործը եւ կը ցուցաբերեն կամաւոր աշխատանքի գիտակցութիւնն ու զոհաբերութեան ոգի, ՀՕՄ-ի լոզունգով՝ «Ժողովուրդիս հետ ժողովուրդիս համար»:

Ապա, ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան ատենապետուհի ընկերուհի Անի Օհանեան կարգաւ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան շնորհաւորական նամակը, որուն մէջ վարչութիւնը կ'ողջունէ անցեալի ու ներկայի ընկերուհիներուն ազգանուէր գործունէութիւնը Գանատայի շրջանին ու հայրենիքի մէջ: Ապա ընկերուհի Օհանեան ընթերցեց Գանատայի Շրջանային վարչութեան խօսքը, որուն մէջ «Սուէ» մասնաճիւղը կը դրուատուի որպէս կայուն մասնաճիւղ՝ «Սուէն կը բաժնէ, այլ վճռակամօրէն կը գործէ»: Ընկերուհի Օհանեան շեշտեց, թէ մասնաճիւղը ունի հմտութիւնը երիտասարդներ ներգրաւելու եւ գանձք մասնակից դարձնելու գանազան ձեռնարկներու՝ ծրագրման ու կազմակերպչական բաժինը վստահելու անոնց, ապա շարունակելով ընկերուհին հաստատեց, թէ այսպիսով է, որ մասնաճիւղը կ'ուճանայ եւ կը պահէ իր այժմեականութիւնը:

Սուք առաւ նաեւ ՀՅԴ «Միհրան Փափազեան» կոմիտէի ներկայացուցիչ ընկհ. Մարալ Նազարեան, որ շնորհաւորեց ՀՕՄ-ի «Սուէ» մասնաճիւղը՝ իր 60-ամեակին առթիւ, եւ բարի երթ մաղթեց ՀՕՄ-ի նուիրական աշխատանքին ու ազգանուէր առաքելութեան:

Ընկհ. Ոսկեան ներկայացուց Trio de Vole երրեակը, ղեկավարութեամբ տիկին Փաթիլ Հարպոյեանի: Երրեակը հրաշալիօրէն յաջորդաբար ներկայացուց Գալիանէ Չեփոդայեանի երաժշտական մէկ կտորը, Կոմիտասի՝ «Երկինքն ամպել ա», «Այ ալուրդ» եւ Եղուարդ Աբրահամեանի «Scherzo»-ն:

Մասնաճիւղի 60-ամեայ գործունէութիւնը պարփակող տեսերիզի ցուցադրութեամբ ներկայացուցաւ Մոնթրեալի մասնաճիւղին պատմականն ու գործունէութիւնը առ այսօր, որուն աւարտին շնորհակալական խօսք ուղղուեցաւ սոյն տեսերիզի պատմական բաժնի պատրաստութիւնը ստանձնող ընկերուհի Անի Պապիկեանին եւ պրն. Սերժ Սոսոյեանին: Շնորհակալական խօսք յայտնուեցաւ նաեւ ընկհ. Տիրուկ Մանճիկեանին, «Հորիզոն» շաբաթաթերթին յատուկ ներդրին մէջ 60-ամեակին առթիւ լոյս տեսած հարցազրոյցներուն խմբագրման աշխատանքը բժախնդրօրէն իրագործուուն համար:

Ընկհ. Լեւակ ներկայացուց եւ բեմ հրաւիրեց օրուան պատգամաբեր ընկհ. դոկտ. Լալէ Մանճիկեան Նափուճեանը, որ յայտնեց, թէ կը պատկերացնէ ՀՕՄ-ը որպէս կայուն կորիզ, միշտ պատրաստ՝ ընդունելու եւ գործ վստահելու նոր անդամին՝ առանց տարիքի խտրականութեան, միշտ ներշնչուած Սուէ մայրիկի տիպարէն: Եւ վերջապէս անդրադառնալով ապագայի ՀՕՄ-ի հեռանկարներուն, ընկհ. Մանճիկեան կը հաւատայ, որ ՀՕՄ-ը կարեւոր դեր պիտի ունենայ հայրենիքի մէջ կանանց իրաւունքներու պաշտպանութեան եւ նացուկ պիտի կանգնի հայ կնոջ ամէնուր: Փակելով իր խօսքը ընկերուհին մէջբերեց Մուշեղ Իշխանի խօսքերը ՀՕՄ-ի քայլերգէն. «Լոյսի բանակ եւ գթութեան խաչուհի», որ կը նշէ թէ, ՀՕՄ-ը կը ճանչցուի իր ծառայութիւններով ու գործունէութեան լայն ծաւալով, ազգայինէն հասնելով դէպի համամարդկային գործունէութիւն:

Ապա տեղի ունեցաւ զարգասեղներու տուչութիւն: Իրենց 15-ամեայ անդամակցութեան համար

ՀՕՄ... Ծար. էջ 10

Արտաքին սպառնալիքը իր նոր ժանիքներով...

Հայաստանի արտաքին քաղաքականության վերածափարկման արդյունքում այս սկզբնական փուլին մեջ մենք գտնվում ենք ԱՄՆ-ի նախագահին կողմէ աշխարհի քաղաքական բեմին ուղղուած հերթական մարտահրավերին առջև: ԱՄՆ չեղեալ կը յայտարարէ Իրանի հետ միջուկային համաձայնագիրը միաժամանակ խիստ արգելքներ խոստանալով Իրանի հետ տնտեսական յարաբերութիւններու մէջ գտնուող ամերիկեան հաստատութիւններուն: Աւելին: Պատժամիջոցներու սպառնալիքը ուղղուած կը թուի ըլլալ նաեւ բոլոր այն երրորդ երկիրներուն (ինչպէս Հայաստանն ու Արցախը), որոնք երկկողմանի տնտեսական յարաբերութիւններու մէջ են Իրանի հետ:

Իրան Հայաստանի չորրորդ ամենամեծ առևտրական գործընկերն է եւ անշուշտ Հայաստանի կապը Իրանի հետ ռազմավարական մեծ նշանակութիւն ունի մեր երկրին համար: Ան մեծապէս կենսական է եւ անգանցառելի՝ բոլոր արտաքին պատժամիջոցներէն առաջ ու ետք: Ոչ մէկ թրամփի ի վերջոյ ի վիճակի է հայ-իրանական այս կենսական երակը խափանելու: Բայց յարաբերութիւններու այսօրինակ սրումը յղի է ծանրագոյն հետ-անքննելի Հայաստանի եւ Արցախի համար:

Այսօր բոլոր փաստերը ցոյց կու տան, որ այս տագնապին իսկական հրահրիչը Իսրայէլն է, որ շնորհիւ իր ներքին ամերիկեան խարխիւին յաջողած է «զօրաշարժի ենթարկել» վարչակազմի երեք սիւները յանձինս Պետ-Քարտուղար Փոմփէյճի, Անվտանգութեան Պետ Պոլթընի եւ Պաշտպանութեան Քարտուղար Զօր. Մաթիսի: Այս տագնապէն մեծապէս նպաստաւորուելու դիրքին վրայ կը գտնուին Ազդպէյճան եւ Թուրքիա: Եւ անշուշտ յառաջիկայ ամիսներուն Հայաստան կրնայ ինքզինք գտնել հայ-ռուսական կապերու առաւել սերտացման պարտադիր նոր փուլի մը մէջ ի հեճուկս բազմակողմ դիւանագիտութեան:

Վարչապետ Փաշինեանի փոխընտրութիւնները սահմանափակ են: Հայ դիւանագիտութեան նաւը մեծ դժուարութեամբ է, որ ճամբայ կը կտրէ: Թրամփի որոշումը ուղիղ հարուած կու տայ մեր ազգային անվտանգութեան, եթէ կացութիւնը թողունք իր բախտին: Որպէսզի կարելի ըլլայ այս վտանգը դիմադրաւել՝ Պր. Վարչապետը այժմէն իսկ պիտի գործի լծէ մեր ԱՄՐՈՂՋԱԿԱՆ ԿԱՐՈՂԱԿԱՆ ՈՒԹԻՒՆԸ ընդգրկելով գործին մէջ: Եւ հոս է մեր իսկական յաղթանակին գաղտնիքը:

ԿԱՐՈ ԱՐՄԷՆԵԱՆ

Թուրքիոյ մէջ առաջին անգամ ըլլալով խորհրդարանական ընտրութիւններուն Տիարպեքիլէն կրնայ առաջադրուիլ հայ թեկնածու

Թուրքիոյ Հանրապետութեան պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, այս տարուան Յունիս 24-ին նախատեսուող խորհրդարանական ընտրութիւններուն կրնայ առաջադրուիլ Տիարպեքիլի հայ համայնքի ներկայացուցիչներէն Գաֆուր Թիւրքայի (Օհաննէս Օհանեան) թեկնածութիւնը: Այդ մասին Տիարպեքիլէն կը հաղորդէ Akunq.net-ի յատուկ թղթակից Կարօս Սասունեանը:



Կարօս Սասունեանի փոխանցմամբ՝ Գաֆուր Թիւրքայի թեկնածութիւնը կ'առաջադրուի քրտամէտ ժողովուրդներու Դեմոկրատական կուսակցութեան (HDP) կողմէ: Ծանօթ է, որ նախապէս իսլամացուած, այնուհետեւ մկրտուած Գաֆուր Թիւրքայը, որուն հայկական անունը Օհաննէս Օհանեան է, տեղի հայ համայնքի աշխոյժ ներկայացուցիչներէն է, ինչպէս նաեւ Մերձաւոր Արեւելքի ամենամեծ եկեղեցիներէն մէկը համարուող Տիարպեքիլի Սուրբ Կիրակոս հայկական եկեղեցւոյ ղեկավար խորհուրդի անդամներէն: Թիւրքայը յաճախ այցելած է Հայաստան նաեւ հայրենիք առաջնորդած է Սփիւռքի նախարարութեան «Արի տուն» ծրագրին մասնակցած տիարպեքիլցի հայերը:

Ինչպէս կը նշէ Կարօս Սասունեան, այս առաջադրման հաւանականութիւնը մեծ ոգեւորութիւն առաջացուցած է Տիարպեքիլի հայ համայնքին մէջ: Անոր փոխանցմամբ՝ ժողովուրդներու Դեմոկրատական կուսակցութեան իրաւասուններու ժողովին մէջ ընդգծուած է, որ հայերը փոքրամասնութիւն կը համարուին իրենց սեփական մայր հայրենիքին մէջ, եւ որ կուսակցութիւնը անպայման դրական մտայնութիւն կը ցուցաբերէ ազգութեամբ հայ քաղաքացիներու թեկնածութեան հանդէպ, եւ որ այդ ոչ թէ շնորհում մըն է տեղի հայերուն, այլ ուղղակի կը վերականգնուի անոնց իրաւունքը:

Այսօրուան դրութեամբ արդէն իսկ սկսուած է ներկայացուած հաւանական թեկնածուներու ցանկի ուսումնասիրութիւնը, իսկ վերջնական ցանկը Թուրքիոյ Գերագոյն ընտրական խորհուրդին կը ներկայացուի Մայիս 21-ին:

Հորիզոն www.horizonweekly.ca

Linda Kharaboyan Notaire
Vos affaires. À cœur.
Therrien Couture
3111, boul. Saint-Martin O., #500
Laval (Québec) H7T 0K2
t. 450 682.5514 - 855 633.6326
linda.kharaboyan@therriencouture.com
therriencouture.com

VIZUALIS optométriste
DR SHANT DONABEDIAN
Centre d'Achat Fairview - Fairview Mall
Pointe Claire
514 695 2555 - VIZUALIS.CA

PHOTO Cristal
(514) 744 4313
Mariage - Portrait - Graduation
Restauration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement
Video - Reproduction
647 Boul. Decarie
V.L. Montreal QC
H4L 3L3
photocristal@hotmail.com
www.photocristal.com

Assura Bien inc.
Cabinet en assurance de dommages et de services financiers
Ապահովագրական գրասենեակ
KRIKOR ABRAKIAN **VAHAN MATOSSIAN**
970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN
Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager
COMPTÉ D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELL) • CRÉATION D'HÉRITAGE •
REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ •
ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE
& COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT
3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,
Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

TAXI MIRABEL
450-430-2650
Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիքը ունի
20 հայ թաքսի վարորդի Միրապէլ շրջանին մէջ:
Հաճեցէք հեռաձայնել Արային (514) 979-1317 քիսին:
Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number,
besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**

RE/MAX RE/MAX 3000 inc.
Agence immobilière
Elie Berberian
Courtier immobilier | Real Estate Broker
C 514.519.3543
B 514.333.3000

ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN
POSE D'ONGLES
RÉSINE ET POUFRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECOURÈMENT SUR ONGLES NATURELS
Առողջ եղունկներու խնամքի համար հեռաձայնել՝
514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker
Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance
11820 General Giraud
Montreal, QC H4J 2H6
Res: (514) 332-7021
Fax: (514) 332-7376
Cell: (514) 927-2666
krikormar@gmail.com

FIVE STAR ELECTRIQUE
CINQ ÉTOILES
SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL
BEDROS NALPATIAN
442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514-497-5155 FAX: 450-689-3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

CENTUM
Metrocap Wealth Solutions Inc.
License # 12147
Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders
416.662.6650 cell
centum.ca/sosie_demersesian

ALINE BEKEREJIAN
NOTAIRE - NOTARY
180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5
T 514.382.7222
F 514.381.1818
aline.b@notarius.net
www.abnotaires.com
Լոտար եւ Իրաւաբանական Խորհրդատու՝ Ալին Բեքերեճեան

Գանատայի Հայոց Թեմի Ազգային Երեսփոխանական 60/17-րդ Ժողովը աւարտեց իր աշխատանքները

Գանատայի Հայոց Թեմի 60/17-րդ Ազգային Երեսփոխանական Ժողովը գումարուեցաւ 4-5 Մայիս 2018-ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցւոյ հիւրընկալութեամբ եւ նախագահութեամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեանի:

Ժողովին իրենց մասնակցութիւնը բերին Թեմի բոլոր եկեղեցիներու Հոգեւոր Հովիւներն ու Ազգային Երեսփոխանները, որոնք ժամանած էին Մոնթրէալէն, Լաւալէն, Գեմպրիճէն, Վանգուվըրէն, Սենթ Գաթրինզէն եւ տեղւոյն Թորոնթոյէն: Ազգային Երեսփոխաններու կողքին հիւրաբար ժողովին իրենց մասնակցութիւնը բերին Ազգային Պատգամաւորները եւ գործակից կազմակերպութիւններու ներկայացուցիչները:

Ազգային Երեսփոխանական Ժողովը՝ նախագահութեամբ Թեմիս Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեանի, սկսաւ իր օրակարգերու գործադրման Ուրբաթ կէսօրին, ուր զիւանի աստեղծութիւններ ընտրուեցան տեսարբ Արմէն Կէտիկեան եւ Օհան Կիւրեղեան, իսկ քարտուղարներ՝ Տ. Գարեգին Վրդ. Շիրաթեան եւ տիկին Տիրուկ Մանճիկեան: Ժողովի առաջին օրակարգով ընթերցուեցաւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետի հայրական պատգամը՝ ուղղուած ժողովին:

Ժողովը քննարկեց Առաջնորդին, Կրօնական Ժողովին եւ Ազգային Վարչութեան տարեկան միամեայ գործունէութիւնը: Ժողովը հանգամանօրէն անդրադարձաւ նաեւ Թեմիս ազգային եւ եկեղեցական բազմերես հարցերուն, ու յատկապէս՝ երիտասարդութեան մօտ Գրիստոնէական եւ Հայեցի դաստիարակութեան, Թեմիս յառաջիկայ 10-ամեայ գործունէութեան ծրագրի գործադրման, Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակին եւ վերջին տարիներու հայութեան թրուածին՝ Գանատայի տարածքին:

Ժողովը իր երախտագիտութիւնը յայտնեց ՆՍՕՏՏ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին եւ վերահաստատեց իր անվերապահ կապուածութիւնը Կիլիկիոյ Սուրբ Աթոռին ու անոր առաքելութեան: Անդրադարձաւ նաեւ Վեհափառ Հայրապետի քահանայական ձեռնադրութեան եւ օծման 50-ամեակին:

Ժողովը պաշտօնական նամակ յղեց ՆՍՕՏՏ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Գանատայի վարչապետ ձասթըն Թրուտոյին, Օնթարիոյ նահանգապետ Գաթլին Ուինին եւ Թորոնթոյի քաղաքապետ Ճան Թորրին:

Ժողովի աւարտին տեղի ունեցաւ Կրօնական Ժողովի եւ Ազգային Վարչութեան ընտրութիւնը:

- 2018-2019 տարեշրջանի Կրօնական Ժողովի կազմի անդամներն են. Գերապատիւ Տ. Գեղարդ Մ. Վրդ. Քիւսպէկեան, ատենապետ (Թորոնթո) Արթանապատիւ Տ. Գառնիկ Ա. ՔՏՆ. Գոյունեան, ատենադպիր (Մոնթրէալ) Հոգեւոր Տ. Վարդան Վրդ. Թաշճեան, խորհրդական (Լաւալ) 2018-2019 տարեշրջանի Ազգային Վարչութեան կազմի անդամներն են. Տիկին Մովսիկ Թեղեան, ատենապետ (Լաւալ) Պրն. Յակոբ Պուլկարեան, ատենադպիր (Մոնթրէալ) Պրն. Վարդապետ Փանոսեան, գանձապահ (Լաւալ) Պրն. Յակոբ Ճանպաղեան, փոխ-ատենապետ (Թորոնթո) Պրն. Համբիկ Գարայեան, խորհրդական (Լաւալ) Պրն. Մայք Թիթիգեան, խորհրդական (Գեմպրիճ) Տիկին Օսիկ Միսիրթիսեան, խորհրդական (Թորոնթո) Պրն. Լեւոն Պէնկեան, խորհրդական (Մոնթրէալ) Պրն. Յակոբ Տէր Յակոբեան, խորհրդական (Վանգուվըր)

Ի դիմաց՝
Գանատայի Հայոց Թեմի
Ազգային Երեսփոխանական Ժողովին
Թորոնթո, Օնթարիո

«Justifying Genocide: Germany and the Armenians from Bismarck to Hitler» գիրքի ներկայացում



26 Ապրիլ 2018-ին, «Զօրեան» հիմնարկի նախաձեռնութեամբ եւ համագործակցութեամբ՝ Մոնթրէալի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Համագործակցութեան Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան, տեղի ունեցաւ պատմաբան եւ քաղաքական գիտութեան մասնագէտ, ՀայՖայի Համալսարանի դասախօս դոկտ. Սթեֆան Իհրիկի «Justifying Genocide: Germany and the Armenians from Bismarck to Hitler» գրքին ներկայացումը, ՀԲԸՄ-ի «Տէրվիշեան» սրահէն ներս:

Դոկտ. Սթեֆան Իհրիկ, պատմական եւ քաղաքական գիտանկիւնէն, ներկայացուց գերմանացի քաղաքագէտներու եւ ընդհանրապէս Գերմանիոյ կառավարութեան կեցուածքը հայերու եւ Հայոց ցեղասպանութեան հանդէպ: Ան Գերմանական դանազան հրատարակութիւններու եւ հեղինակներու գիրքերու մէջ բերումներով բացատրեց, թէ ի՞նչ դրդապատճառներով գերմանացիները արգարացուցած են Թուրքիոյ վարած բնաջնջումի ծրագիրները: Յետագային, անոնք թուրքերէն դասեր քաղելով եզրակացուցած են, թէ փոքրամասնութիւնները կարողականութիւնը ունին արգելք հանդիսանալու նոր եւ հզոր պետութիւններ հիմնելու գործին մէջ, եւ այս համոզումով եւ սրամաբանութեամբ է, որ իրենք ալ իրենց կարգին դիմած են հրէական ջարդին, նպատակ ունենալով կառուցել Հիթլերին երազած հզոր Գերմանիան:

Ներկայացման աւարտին դոկտ. Իհրիկ պատասխանեց ներկաներուն հարցումներուն:

Իր փակման խօսքին մէջ «Զօրեան» հիմնարկի տնօրէն Գուրգէն Կրէկ Սարգիսեան ներկաները քաջալերեց, որ անպայման ձեռք ձգեն նշեալ գիրքին անձնական օրինակ մը, անդրադառնալով որ նման պատմական իրադարձութիւններու հաւաքական գիտակցութիւնն է, որ պիտի նպաստէ հաւաստի ապացոյցներ ունենալու՝ մեր ազգութեան վերաբերող բոլոր հարցերուն մասին զրուցելու եւ բանակցելու գործընթացին մէջ:

Այցելեցեք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցեք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը

HITUNES.CA

Ունկնդրեցեք triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հիւգաբաթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցեք շահեկան հարցազրոյցներ

TRIKTRAK.CA

Ghadir Meat & Restaurant

T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

BAKERY AND FINE FOODS

OPEN 7 DAYS A WEEK!
WEEKDAYS 9am - 7pm
SATURDAY 6AM - 6PM
SUNDAY 9AM - 3PM

LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST
ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN

Noor Fine Food
Gourmet Mediterranean Cuisine

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5

Tel 416 745 3111
Fax 416 745 9337

ANI Restaurant

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

Sutton

Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

Annie Varbedian
Sales Representative

Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbed@hotm.com
www.suttongroupadmiral.com

hearing aid source

Andre Ayvazyan HIS B.A.S.

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

Crown Pastries
Fine Middle Eastern Pastries

2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON. M1R 2Z5

Tel 647.351.2015
www.crownpastriesbaklava.com

I.D.A.
Part of the **Royal** family of pharmacies.

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Cassandra Pharmacy Inc.

2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Tel. : **416.449.2040**
Fax: **416.449.2048**

ANI BAKERY
ԱՆԻ ՓՈԱՊԱՆ

Middle Eastern Pizza
Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8

Tel: 416.285.7164

Տաճկահայ Գաղթաշարժը Եւ Անոնց Դերը Հայաստանի Հանրապետութեան Կազմութեան Մէջ - ԺԷ.



Գլուխ Զորքորդ
1916. Մուշ-Սասուն, Էրզրում-Տրապիզոն
5. Նորէն Նահանջ

Ինչպէս ընթացողը տեսաւ, վանէն մինչեւ Մուշ, Խնուսէն մինչեւ Էրզրում եւ Երզնկա լարուած աշխատանք մը կը տարուէր: Հայաստանի լայն սահմանները գրաւելէ յետոյ, երկար ամիսներու աշխատանքի մը կը լծուէինք: Պէտք էր մտահոգուիլ տեղաւորման գործով, մտածել ներգաղթի մասին, օրը օրին ընդունիլ նոր ազատուած բեկորները, սննդատու կայաններ հիմնել, նախնական որբանոցներ բանալ, կուտակուած որբերը Կովկաս փոխադրել, տեղական պայմաններէն օգտուիլ եւ պաշար հաւաքել, վարչութիւններ կազմակերպել, զինական ուժ ստեղծել եւ թիկունքն ապահովել, եւն. եւն.: Այս բոլոր աշխատանքներն իրենց ընթացքին մէջն էին, բայց հեռու էին իրենց լրումէն:


Այն ժամանակ, երբ մենք կը կարծէինք թէ ուսական գորքերը Թուրքիոյ ներսը պիտի մտնէին եւ վերջնականապէս ջլատէին Թուրքիան Անատոլիայի կեդրոններու մէջ, տեղի ունեցաւ նոր նահանջ մը, որ թէեւ չտարածուեցաւ ամբողջ ճակատներու վրայ, բայց հայրենիքի խիստ վնասակար եղաւ, քանզի ընդ Սարոսի շրջանի հայութեան լաւագոյն մասը իր հայրենի երկրէն:

Ռուսական բանակն ամրանալով Սասնոյ լեռնաշղթայի, Կուտակի եւ Խոզմոյի բարձունքներու վրայ, հրաման ստացած էր յարձակողականով մը գրաւել Հանտոքը եւ իջնել Տիգրիսի հունով դէպի Տիգրանակերտ: Քղիի եւ Ճապաղուրի ուղղութեամբ շարժուած էին բաւական ստուար զօրամասեր, այդ գծով եւս առաջանալու: Այդ յարձակողականի յաջողութեան պարագային Բիթլիզի ուժերը պիտի առաջանային դէպի Սղերդ: Այս դասաւորութեան բերումով Դ. Կորպուսի ամբողջ հրամանատարութիւնը փոխադրուած էր Մուշ եւ բարձրացած էր Կուրտիկի գագաթը, անձամբ հսկելու պատերազմական գործողութիւններու վրայ:

Սասունցի եւ մշեցի զինեալ ուժերը դասաւորուած էին շրջանի քանի մը կէտերու վրայ. իսկ մեծամասնութիւնը բարձրացած էր Սասուն՝ որոշ զինուորական պարտաւորութիւններով:

1916-ի յուլիս 20-ին սկսաւ ուսական յարձակողականը: Սասնոյ բարձունքներու վրայ ուսներն ունէին մօտ 25,000 զինուոր. նոյնքան ալ Քղիի եւ Ճապաղուրի ուղղութեամբ: Թուրքերը Հանտոք եւ Թարխուշ լեռներու ստորոտներու վրայ դիրք բռնած էին եւ կը հաշուէին 16,000 զինուոր: Այդ զինուորները բերուած էին Դարտանէլէն եւ խիստ դիմացկուն կուտուներ էին: Ահաբի ճակատամարտ մըն էր որ տեղի կ'ունենար այն վայրերու մէջ, ուր տասնեակ տարիներով, հայ ֆէտայիները ճակատած էին թրքական եւ քրդական բարբարոսութեան դէմ: Ճակատամարտը շուտով փոխուեցաւ դիրքային կռուի եւ երկուստեք հազարաւոր կեանքեր հնձեց: Սասունցիներ նորէն բարձրացան իրենց պաշտելի Հանտոքը եւ այն տեղէն հարուածեցին թշնամու կողքէն: Ճակատամարտը տեւեց չորս օր: Ռուսերը թաքմ գունդեր ստացան եւ գրոհը շարունակեցին: Թուրքերը կոտորակուած՝ տեղի տուին եւ փախան դէպի Խուլքի ձորը (Տիգրիսի հունի վրայ): Ռուսական թնդանօթի որոտը մինչեւ Փասուրը հալածեց թշնամուն: Յուլիս 23-ին վերջնական յաղթանակը շահուած էր:

Յուլիս 24-ին, Սասնոյ գրաւուած բարձունքներու վրայ մենք ուսական զօրք չտեսանք: Միայն չորս թնդանօթիներ կը մնային Կուրտիքի բարձունքին վրայ, կազմ ու պատրաստ, իրենց պահակներով: Մենք ապահով էինք: Սակայն թնդանօթամարտը կը շարունակուէր Եփրատի հովիտին մէջ, Կէնճի եւ Ճապաղուրի ուղղութեամբ: Ճակատի այդ փոփոխութիւնը մեր մէջ կասկած արթնցուց, ու մենք մօտեցանք Կուրտիքի թնդանօթախմբի հրամանատարութեան, տեղեկութիւններ առնելու համար: Հրամանատարը յայտնեց որ նահանջ տեղի ունեցած է: Թուրքերը Ճապաղուրի կողմէ կ'առաջանան դէպի Ս. Կարապետ եւ Մշոյ դաշտը: Սասնայ ուսական յաղթական բանակը Խոզմոյի վրայով իջած էր Եփրատի հովիտը եւ կը դիմագրէր թրքական բանակին, եւ որ ինքը կտրուած է բանակէն, սակայն չի կարող շարժուիլ, հրաման ստացած չլլալուն պատճառով:



RUSSIAN SOLDIERS WITH THE NINE TURKISH BANNERS CAPTURED DURING THE BATTLE AT ERZERUM

Մենք մեր բոլոր ուժերը հաւաքեցինք եւ վար իջանք Մուշ: Մուշի գօրքը հեռացած էր առանց նախազգուշացնելու հայ ազգաբնակչութիւնը: Քաղաքին տակ կը մնար գօծնատանտը իր մէկ տասնեակով՝ պատրաստ մեկնելու:

Նոյն գիշեր կարգադրուեցաւ թողնել Մուշ քաղաքը: Զինուորները զրկուեցան շրջանի գիւղեր, որպէսզի ժողովուրդը ճամբայ հանեն դէպի Չարպուհար-Խնուս: Հասարակական հաստատութիւնները աճապարանքով փոխադրեցին հիւանդներն ու որբերը դէպի Սուլուխի կամուրջը, որ յաջորդ օրերուն վտանգուեցաւ թշնամու կողմէ: Այսպիսով, յուլիս 25-ի առաւօտեան Մուշի եւ դաշտի ժողովուրդը արդէն անցած էր Սուլուխի կամուրջը եւ ուղղուած էր դէպի Խնուս: Ժողովրդական զինուած փոքրիկ խմբակներ յետնապահի դեր կը կատարէին, հսկելով ժողովուրդի ապահով անցքը վրայ:

Թուրքերն առաջացան ու գրաւեցին Մուշ քաղաքը, Մշոյ դաշտը, Բիթլիզը եւ հասան մինչեւ Չարպուհար (Խնուսի մօտերը) իսկ միւս թեւը հասաւ մինչեւ Ախլաթ: Այս առաջնադարձութեան հետեւանքով Մուշի, Սասունի եւ Բիթլիզի ամբողջ բեկորները հեռացան, բռնելով երկար նահանջի ճամբայ մը: Սարսեցան Բուլանուխ-Մալազկերտը եւ Խնուսը, բայց տեղահան չեղան:

Նահանջող ժողովուրդի մէկ փոքր մասը մնաց Խնուսի շրջանի մէջ. իսկ մնացած մօտ 12,000 շուներ անցաւ Խնուսէն եւ շարունակեց իր ճամբան դէպի Կովկաս: Խնուսի շրջանը պաշարէ զուրկ էր. իսկ Կովկասէն, այդքան հեռաւորութեան վրայ, բաւական դժուար էր օրը օրին ստանալ պաշար եւ կերակրել 12,000 հոգին: Այդ պատճառով, հարաւոր չեղաւ կանգ առնել թիկունքի շրջաններու մէջ եւ տեղաւորուիլ:

Ժողովուրդն իր գէնքերու մեծ մասը կրցաւ պահել Խնուսի ճանապարհներու վրայ, յարմար վայրերու մէջ, խուսափելու համար ուսական գօրքի միջամտութիւններէ: Կը մնային զինուած փոքրիկ խմբակներ, որոնք կ'ընկերանային ժողովուրդին:

Ժողովուրդը կարճ ճանապարհ կտրելու համար, ինչպէս նաեւ խուսափելու ուսաներու արգելքներէն, խնուսի ճանապարհը թողուց, եւ բռնեց Խալազի ամառի բարձունքները, հասաւ Բասէնի Ղարաքիլիսէ, ուր արդէն հասարակական կազմակերպութիւններ գոյութիւն

ունէին եւ օգնութեան գործը կազմակերպած էին: Ատկէ ժողովուրդն անցաւ ուսական Բասէն, մտաւ Արազի հովիտը եւ հասաւ Կաղզուան: Այս տեղէն մաս մը կրցաւ անցնիլ ուղղակի Ալէքսանդրոպոլ, իսկ մեծ մասը շարունակեց իր ճանապարհը Արազի հովիտով մինչեւ Կողբ, անկէ ալ Սարգարապատի դաշտը, Արաքս կայարան, ուրկէ երկաթուղով փոխադրուեցաւ Ալէքսանդրոպոլ եւ Շիրակի գիւղերը: Ժողովուրդը իր որբերով կտրեց անցաւ մօտ 550 քիլոմէթր ճանապարհ մը, ոտքով, առանց վնասի եւ մահացութեան: Նախօրօք եղած հեռագրական կարգադրութիւններու վրայ, գաղթականական մարմիններ, Բասէնէն սկսած, կազմակերպած էին օգնութեան գործը, ճանապարհի ամբողջ երկայնքին: Իսկ ժողովուրդն ունէր իր ներքին կազմակերպական մարմինները, որոնք մեծապէս կ'օժանդակէին օգնութեան գործին եւ կարգապահութեան կը հսկէին:

Ռուսական բանակը, օգոստոսի ընթացքին, կրցաւ կասեցնել թրքական յառաջնադարձութիւնը եւ հակահարուածով մը վերագրաւել Մշոյ դաշտը, առանց Սասնոյ եւ Մուշ քաղաքի բարձունքներու, ամբացաւ Բուլանուխի Քօսուրի լեռնաշղթայի վրայ եւ գրաւեց Ախլաթը: Թուրքերը մնացին Բիթլիզի մէջ եւ իրենց առաջապահներով պահպանեցին Եփրատի կտրուած կէտը: Մնացած ճակատները անխախտ մնացած էին:

Դրութիւնը վերականգնեցաւ: Հասարակական աշխատանքները առաջուայ թափով շարունակուեցան: Սասունցիներ եւ մշեցիներ կովկասեան Հայաստան հասնելէ յետոյ, տեղաւորեցին իրենց որբերն ու կանայքը, իսկ տղամարդկանց մեծամասնութիւնը 1916-ի աշնան վերադարձաւ Խնուս-Մուշ, այս անգամ, առանց ժողովրդական զանգուածի, ժողովրդական բանակի իր պարտականութիւնը կատարելու Մշոյ դաշտի եւ Խնուսի շրջանի մէջ:

Այս նահանջէն յետոյ, գրաւուած Հայաստանը այլեւս մասնակի նահանջներու ենթակա չեղաւ: Ժողովուրդը կամաց կամաց տեղաւորուեցաւ, մնայուն բնակիչի հանգամանք ստացաւ, իր սեփական աշխատանքով եւ վարուցանքով ապրելու կեանքի մէջ մտաւ:

ԿԱՌՕ ՍԱՍՈՒՆԻ

Centenaire de la Première République d'Arménie Հայաստանի Հանրապետության Անկախության 100-ամեակ

Centenaire de la Première République d'Arménie. Levée du drapeau à l'hôtel de ville de Laval


Հայաստանի Հանրապետության Անկախության 100-ամեակի առթիվ եռագոյն դրոշը առաջին անգամ ըլլալով պիտի ծածանի Լաալի քաղաքապետարանի շէնքին առջեւ:

📍 1 Place du Souvenir, Laval

📅 Samedi, le 26 Mai 2018

🕒 11h30

Սիրելի հայրենակիցներ, խումբերան ներկայ գտնուինք Շաբաթ 26 Մայիս-ին, ժամը 11:30-ին Լաալի քաղաքապետարան:



Designed by Tyne Zetlian



ՀՈՎԱՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԲԱԲԳԵՆ ԱՐՔ. ՉԱՐԵԱՆԻ
ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ
ԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

ՎԵՐԱԿԵՐՊՈՆՆԱՅԻՐ

Երիտասարդական 10-րդ Համախմբում
9-10 ՅՈՒՆԻՍ 2018

IAWAH բանակավայր

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԵՌԱՉԱՅՆԵԼ
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ (514) 856-1200
ԼԱԻՎԼ (450) 688-6795
ԹՈՐՈՆԹՕ (647) 838-0097
ԳԵՄՊՐԻՃ (519) 623-6372
ՎԱՆԳՈՒՎԸՐ (614) 626-9627
ՄՈՆԹՐԵԱԼ (514) 331-5445 X202

ԿԱՍ ԱՅՑԵԼԵԼ՝ WWW.ARMEIANPRELACY.CA
ԺԱՄԿԵՏ՝ 20 ՄԱՅԻՍ 2018
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱԿ՝ \$80




Association Médicale Arménienne du Québec
Armenian Medical Association of Quebec
Քեպեգի Հայ Բժշկական Ընկերակցություն

Flexible Dieting

Dr. Laura Patakfalvi

GP Hospital Medicine Expert
Professor at McGill University



May 24th, 2018
7:00pm

Centre Arménie

1025 Boul. Élisabeth,
Laval, QC H7W 3J7

Sponsored by:



Arto Mouradian



Լոյս տեսա՝ Ս. Յակոբ Ազգային Վարժարանի «Մեր ճաշագիրքը»

Այս երկյեզու և գունազարդ ճաշագիրքը կ'ընդգրկի 80 բաղադրատոմսեր, ասանդական թէ ժամանակակից, տրամադրուած աշակերտներու կամ անձնակազմի անդամներու կողմէ: Հասոյթը պիտի տրամադրուի դպրոցի խոհանոցին բարելաման:

Վաճառքի վայրեր՝

Մոնթրէալի Հայ Կեդրոն

Կիրակի, 13 Մայիս 2018-ին, կ.ա. ժամը 11-էն կ.ե. ժամը 1

Չորեքշաբթի, 16 Մայիս 2018-ին, կ.ե. 6-էն 8:30

Ուրբաթ, 18 Մայիս 2018-ին, կ.ե. 6-էն 9

Կիրակի, 27 Մայիս 2018-ին, կ.ա. ժամը 11-էն կ.ե. ժամը 1

Լաւալի Հայ Կեդրոն

Կիրակի, 20 Մայիս 2018-ին, կ.ա. ժամը 11-էն կ.ե. ժամը 1



\$25

Յանելեայ տեղեկութիւններու համար գրեցէք
shgourmand@ecolesourphagop.com հասցէին, կամ՝ հետեւեցէք
դպրոցի ընկերային կայքէջերու
(Facebook, Instagram) հաղորդագրութիւններուն:

Կազմակերպությանը՝
 Հ.Յ.Դ. ՄԻՀՐԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ ԵՒ ՍԱՐԳԻՍ ԶԷՅԹԼԵԱՆ
 ԿՈՄԻՏԵՈՒԹԵԱՆՑ

**Հայաստանի
 Հանրապետության
 100
 ամեակ**



**ԱԶԳԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ
 ՓԱՌԱՏՕՆ-ԽՐԱԽՃԱՆՔ**



ԳՈՂԱՐ ՅՈՎՉԱՆՆԻՍԵԱՆ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՍԲ՝

Հայրենիքէն հրաւիրուած
 սիրուած երգիչներ



ԱՂԱՍԻ ԻՍՊԻՐԵԱՆ

ՈՒՐԲԱԹ, 8 ՅՈՒՆԻՒՍ Ժամը 8:30-ին

Centre Arménie, 1025, boul. Elisabeth, Laval, Québec

Մուտքի նուէր՝ \$25.00 աղանդերներ ներառեալ

Հայ Դատի տուրքը ներառեալ

Տոմսերու համար հեռաձայնել՝

Տիկ. Յասմիկ Պիլեմճեանի (514) 831-4755 Տիկ. Զուարթ Տատաղլեանի (514) 582-4480

CARROSSERIE AUTO ST-MICHEL
 625, rue du Bois, St-Eustache

 514 927-3826

OMEGA
 École de conduite
 Driving School Inc.
 514-747-7883
 450-688-4245

GREGOIRE

TLC Global
 Moe Kaloussian
 514-924-4553

HARRY
 AUTO GLASS
 & SEAT COVER
 Tél. : (514) 487-0691



**Pharmacie
Levon Benohanian et
Mher Koubelian Inc.**
Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson
Laval, QC H7W 2G1



T 450 688-4111
F 450 681-5525
proximlaval@gmail.com

Lun. au vend. : 8h30 à 21h
Sam. et dim. : 9h à 17h
Infirmière (jeudi) : 8h30 à 15h



Անվճար սպասարկուքի ն մինչեւ ձեր տունը.
Շաբաթական դեղատուփիկի պատրաստութիւն.
Ազատ փոխադրում ձեր դեղացանկի (dossier)
այլ դեղարանէ. Դեղերու պատուաստում
(vaccination) հիւանդապահի կողմէ.

Բուժական հետեւում՝
արեան բարակութեան (INR), շնչերակային
ճնշման (tension artérielle), արեան շաքարի
(glycémie capillaire), արեան մաղձաճարպի
(cholesterol), եւն.

ՀԱՄԱԵՐԱՅԻՆ, ՀԱՅ ԿՐԹԱԿՈՒՆ ԵՒ ԱՇԽԱԿՈՒԹՅԱՆ ԱՌՈՒԹՅՈՒՆ
Մոնթրէալի «Մանահին» Մասնաճիւղ

ASSOCIATION ÉDUCATIVE ET CULTURELLE ARMÉNIENNE HAMAZKAYTN
Le Chapitre "Sənahin" de Montréal



ԱՆՔ Գարաբաղյանի և Ներկարացի
«Իմ Հայաստան»



L'Ensemble de danse ANI présente
"Mon Arménie"


Պեշարտեստուկան Վեկտոր
ՀՕ ԱԲՍԳԵԱՆ

Directeur artistique et chorégraphe
JOE AVAKIAN

Շաբաթ 2 հունիս 2018 երեկոյան ժամը 8-ին
Auditorium du cégep Vanier, 821 avenue Sainte-Croix, Montréal, (Québec) H4L 3X9

Տոմսերու համար դիմել
Pour les billets contacter
Suzie Delmondojian (514) 573-7224
Lea Khatchatour (514) 941-2518


Մուտքի արժեք
Պատերազմ : 25,00\$



Հովանաւորութեամբ
Գերազնորի Տ. Բարգէն Արք. Չարեանի
Առաջնորդ Դանատայի Հայոց Թեմի



Ազգային Առաջնորդարանը և
Համազգային Դանատայի Երջանային Վարչութիւնը
Կը հրատարակեն ձեզ
Բժիշկ ժիրայր Պատմաճեանի
Գեղարու ետոի գործերու զրոյցահանդէսին



Բացում՝ Ուրբաթ, 15 Յունիս 2018, երեկոյան ժամը 8:00-ին
Մոնթրէալի Հայ Կեդրոնի Աւետիս Ահարոնեան սրահէն ներս
3401 Rue Olivar-Asselin, Montréal, QC H4J 1L5
Ցուցահանդէսը կը շարունակուի
Շաբաթ, 16 և Կիրակի 17 Յունիս 2018
Ժամը 11:00 և 3:00

ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ ՄԷԿ ՆԻԿՈՒՄԸ ԳԱՐՈՒՆ ԶԻ ԳԱՐ

Գարո՛ւն է, գարո՛ւն է՝ ուշացած գարուն:
Նիկոլ Փաշինեան դարձաւ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ:

Արեւ է. այստեղ՝ «Հիւսիսում այս հեռաւոր», ծառերը սկսած են դալարիլ: Բաց գոյնով փոքրիկ տերեւներ սկսած են լեցնել ամբողջ ձմեռը մերկ մնացած ճիւղերն ու ճիւղիկները: Գրեթէ թափանցիկ են այդ տերեւները, եւ արեւին ճառագայթները կարծես անոնց մէջէն կ'անցնին:

Նիկոլը՝ վարչապետ:
Կայ խանդավառութիւն մը, որ համացանցի ճամբով կ'անցնի բոլոր իրական ու երեւակայական սահմանները, կը յաղթահարէ բոլոր Ֆիզիքական ու հոգեկան կաշկանդումները ու կը տարածուի աշխարհով մէկ, կը հասնի ամենուրեք, բոլոր հայերուն, կամ՝ գրեթէ բոլոր հայերուն:

Փաշինեան կը դառնայ Հայաստանի չորրորդ հանրապետութեան երկրորդ վարչապետը՝ փոխարինելով առաջին վարչապետը, որ այդ պաշտօնը վարեց վեց օր միայն:

Ձեռքի փոքր սարքերուն՝ խելախօսներուն եւ տեղեկագիրներուն վրայ, այլեւ համակարգիչներու թէ հեռուստացոյցներու պատաններուն վրայ կը հետեւինք ժողովուրդի ցնծութեան պոթիկումի դրսեւորումներուն: Երիտասարդութեան ցնծութեան: Կը հետեւինք նոր երգերուն, որ կը ցայտեն իրարու ետեւէ, կը ցնծացնեն յեղափոխութիւնը:

Յեղափոխութի՞ւնը, թէ՞ «յեղափոխութիւնը», քանի որ բոլոր վերապահութիւնները չեն անհետացած:

Պատմական օրեր կ'ապրինք, կասկած չկայ:
2018 ապրիլ-մայիսեան այս մեծ պոթիկումը նկատուեցաւ շարունակութիւնը 1965 ապրիլի համաժողովրդային ցասման՝ Մեծ եղեռնի յիսնամեակին առթիւ եւ 1988 փետրուարի ընդվզումին՝ Արցախեան շարժումի առաջին օրերուն: Անկատար մնացեր էին անոնք, եւ «սիրոյ յեղափոխութիւնը» եկաւ ոչ թէ զանոնք աւարտելու, այլ՝ շարունակելու, ինչպէս իրաւամբ դիտել կու

տար մեր մտաւորական ընկերը՝ Սպարտակ Ղարաբաղցեանը, «Օրակարգից դուրս» յայտագրին վրայ իր հետ կատարուած զրոյցին ընթացքին:

Այո, յեղափոխութիւնները իմաստ ունենալէ կը դադրին, եթէ աւարտին, աւարտուած նկատուին:

Մայիս 8-ին Նիկոլ Փաշինեանը ընտրուեցաւ վարչապետ:

Յեղափոխութիւնը, սակայն, եթէ չէ՝ «յեղափոխութիւն»՝ պիտի շարունակուի: Փոփոխութիւնը մէկ վարչապետը ուրիշով մը փոխարինելու նպատակ չունի: Անձ մը փոխել չէր ուզուածը: Զանգուածներուն պահանջածը:

Շա՛տ, շա՛տ բան կայ փոխուելիք:
Իսկ այդ շատը մեզմէ՛ կը սկսի: Իւրաքանչիւրէ՛ս: Ամեն մէկ հայէ:

Եթէ Հանրապետութեան հրապարակը վարչապետի ընտրութեան օրը սպիտակ ներկուեցաւ՝ հոն հաւաքուած բազմութեան ընտրած շարժումներու գոյնով՝ մաքրութիւն ու անաղարտութիւն խորհրդանշելու համար, մաքրումի այդ գործընթացը պիտի սկսի ամեն մէկուս հոգիէն ներս՝ դուրս վանելով պարտուողականութեան, անզօրութեան, յուսահատութեան եւ հրապարակութեան ամեն զգացում, ստորակայութեան ու գերակայութեան ամեն բարդոյթ, սեփական ուժերուն հանդէպ անվստահութեան ու օտարին հանդէպ ստրկամտութեան ամեն մոլութիւն:

Յեղափոխութիւնը ամենէն առաջ մե՛ր մէջ պիտի կատարուի: Մեր՝ հայրենի հողին վրայ ըլլանք թէ այդ հողէն դուրս:

Պիտի փոխուինք, յեղա՛փոխուինք՝ որպէսզի կարենանք տէ՛ր ըլլալ մեր երկրին, որ երկիր ըլլայ ան, պիտի փոխուինք՝ տէ՛ր ըլլալու համար ապրելու մեր իրաւունքին, որպէսզի վայելենք մարդավարի ապրելու մեր իրաւունքը:

Պիտի փոխուինք մանաւանդ դուրս գալու համար ի վերջոյ աւերակներուն տակէն՝ մեր գլխուն փլած կայսրութեան աւերակներուն տակէն: Կայսրութիւններ

ըն՝ աւերակներուն, 70 տարուան թէ 600 տարուան ստրկութեան աւերակներուն տակէն:

Շա՛տ երկար կրեցինք այդ աւերակներուն հետեւանքները: Թշնամիին դէմ պայքարելու տեղ իրարո՛ւ դէմ պայքարեցանք, երկիր պաշտպանելու տեղ՝ երկիր ծախեցինք ու հեռացանք, հարիւր փոքր հայաստաններ ստեղծեցինք մէկ հզօր ու բարգաւաճ հայրենիք պահելու փոխարէն: Հազար տարի, գրեթէ հազար տարի ետք միայն մեր հողը, անոր վերջին մնացորդացը կոչուեցաւ դարձեալ Հայաստան, Հանրապետութիւն Հայաստանի:

Եւ հիմա, հիմա՛ միայն, Սարգսրապատի, Բաշ Ապարանի ու Ղարաբաղի զիւլցած մարտերէն հարի՛ւր տարի ետք է ահա, որ կը յաւակնինք սիրո՛յ յեղափոխութիւնը յանդգնելով:

Յեղափոխութիւն՝ որպէսզի դադրինք գիրար անգոսնելէ, արհամարհելէ, անտեսելէ՝ ո՛ւր որ ալ ապրինք՝ Հայրենիքի մէջ, թէ՛ Սփիւռքի, ո՛ր կուսակցութեան ալ պատկանինք կամ չպատկանինք, ո՛ր եկեղեցւոյ մաս կազմենք կամ չկազմենք:

Գիտնանք, ինչպէս կ'ըսէին՝ քաղաքացի ըլլալ, եւ ոչ պարզապէս բնակիչ, քաղաքացի՝ երկիր կերտելու համար, յառաջադէմ երկիր՝ իր ուսման եւ առողջապահութեան բարձր մակարդակով, գիտական զարգացումով, բարգաւաճող տնտեսութեամբ, ծաղկող մշակոյթով ու ճառագայթող լեզուով, ընկերային արդար կարգերով:

Երկիր՝ իր ամբողջացած տարածքներով:
Երկիր՝ ուր հայերը ուզեն վերադառնալ եւ ոչ թէ անկէ խոյս տալ:

Այս ամենը եւ դեռ աւելին:

Մէկ վարչապետ այս ամենը միտակը չի կրնար իրականացնել, որքան ալ սիրուած ըլլայ ու ժողովրդականութիւն վայելէ, նոյնիսկ եթէ գերմարդկային ուժերով օժտուած ըլլայ ան:

Մարտահրաւէրը բոլորինս է:
Մէկ ծաղիկով գարուն չի գար, ոչ ալ... մէկ Նիկոլով:

ՎՐԵԺ-ԱՐՄԷՆ

Պիտի Ծարունակենք Ծառայել Ամբողջ Լիբանանահայութեան

Մայիս 6-ի երեսփոխանական ընտրութիւնները աւարտած են, եւ Լիբանան 21 մայիսին կ'ունենայ նոր խորհրդարան:

Տակաւին որոշ ժամանակ պիտի խօսուի ընտրութիւններու արդիւնքին, դաշինքներուն, քուէարկողներու թիւի անկումին ընտրուող երեսփոխաններու տեսակին, որակին կամ ներկայացուցչութեան մասին:

Պիտի կատարուին գնահատումներ, ցեխարձակումներ, դաշինքներու հարումներ:

Մեզի համար սակայն յստակ է մէկ բան:

ՀՅ Դաշնակցութեան 4 թեկնածուներէն երեքը այսօր ընտրուած երեսփոխաններ են՝ հայ քուէարկողներու ջանքախիչ մեծամասնութեամբ ընտրուած:

Ընտրութիւն մը, որ կատարուեցաւ համընդհանուր ճիւղերովը ՀՅ Դաշնակցութեան, որուն կողքին ամբօրէն քալեց ՀՅ Դաշնակցութեան գործին հաւատարմութեամբ մեծաթիւ ընտրազանգուած:

Մեր ընտրաշրջաններուն մէջ երեւցող քուէարկողներու ընդհանուր համեմատութեան բաղդատած՝ լիբանանահայ քաղաքացիի մասնակցութեան համեմատութիւնը բարձր է առանց դոյզն կասկածի: Այլոց պարտութեան մենք պատասխանատու չենք եւ ոչ ոքի իրաւունքը կու տանք անտեղի մեկնաբանութիւններով հանդէս գալու:

ՀՅ Դաշնակցութիւնը յաղթական դուրս եկաւ այս ընտրութիւններէն:

Բայց մանաւանդ յաղթական դուրս եկաւ Լիբանանի հայութիւնը, որ գիտցաւ իր ճիշդ ընտրութիւնը կատարել կուսակցութեան կողմէ առաջադրուած թեկնածուներուն:

Ընտրութիւն մը, որ կատարուեցաւ համընդհանուր ճիւղերովը Դաշնակցութեան, որուն կողքին ամբօրէն քալեց Դաշնակցութեան գործին հաւատարմութեամբ մեծաթիւ ընտրազանգուած

Ինչպէս մեր ելոյթներուն մէջ տեւաբար կը կրկնէինք, եթէ Դաշնակցութեան թեկնածուներուն չքուէարկէ հայ քաղաքացին, անհրաժեշտ է, որ ան քուէարկէ ՄԴՀԿ-ի կամ ՌԱԿ-ի թեկնածուներուն:

Պիտի փափաքէինք մեր երեսփոխաններուն կողքին տեսնել հայկական կուսակցութեանց երեսփոխանները:

Այդպէս չեղաւ:

Ընտրական օրէնքը առիթ տուաւ տարբեր դէմքերու, որ ընտրուին հայկական աթոռներու երեսփոխան:

Ընտրութիւններու աւարտին, վարձքը կատար բոլոր քուէարկողներուն:

Անոնց, որոնք քուէարկեցին մեր թեկնածուներուն:

Անոնց, որոնք քուէարկեցին միւս կուսակցութեանց թեկնածուներուն:

Անոնց, որոնք մասնակցեցան քուէարկութեան:

Շնորհակալութիւն մեր ընտրազանգուածին: Այն սքանչելի հայերուն, որոնք հպարտութեամբ մասնակցեցան հայկական որոշումը հայութեան մօտ պահելու մեր ձգտումին:

Շնորհակալութիւն արտերկրի մէջ արձանագրուած եւ քուէարկած լիբանանահայերուն, որոնք Լիբանանէն

հեռու, քուէարկեցին Լիբանանին, Լիբանանի հայութեան համար:

Շնորհակալութիւն Լիբանան ժամանած հայերուն, որոնք ուղեցին մեզի հետ ըլլալ վճռական այս օրերուն:

Վարձքը կատար բոլոր անոնց, երկնք թէ երիտասարդ, մեր սքանչելի տղոց ու աղջիկներուն, որոնք ամիսներ ամբողջ եւ ընտրութեան օրը հեւքով ու անտրտունջ կատարեցին իրենց վստահութեամբ գործը:

Շնորհակալութիւն Լիբանանի հայութեան:

Մենք պիտի շարունակենք գործել իբրեւ լիբանանցի հայ երեսփոխաններ, իբրեւ ՀՅ Դաշնակցութեան երեսփոխաններ, ամբողջ Լիբանանի հայութեան համար:

Մեզի հետ թէ մեր դէմ քուէարկողներուն համար անխափր:

Առաջնահերթը՝ Լիբանանն ու լիբանանահայութիւնն են այսօր մեր երեսփոխաններուն համար:

Հպարտ, ինքնուրոյն եւ ազատ որոշումի տէր Լիբանանի հայութիւն:

Հզօր լիբանանահայութիւն հզօր Լիբանանի համար:

Հզօր լիբանանահայութիւն համայն հայութեան համար:

ՅԱԿՈՒԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ



Թորոնթոյի «ՆՈՐ ՀԱՅ ՀՈՐԻՉՈՆ» յատագիրը կարելի է դիտել Շաբաթ առաւօտները ժամը 9:00-էն 10:00, իսկ նոյն յատագրի կրկնութիւնները Կիրակի օրերը առաւօտեան ժամը 7:00-8:00 եւ Երեքշաբթի օրերը կէսօրուայ ժամը 12:00-1:00 OMNI 1 կայանէն:

«Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝

Շաբաթ- 08:30 (առաջին սիտու)

Կիրակի- 07:30am

Երկուշաբթի- 08:00am

Երեքշաբթի- 08:30am

Չորեքշաբթի- 7:30pm

Հինգշաբթի- 10:30am, 8:30pm

Ուրբաթ- 5:00pm

Ուղիղ արձակում՝ www.icitelevision

Videotron:
HD616 կամ SD16

Bell Fibe:
HD1216 կամ SD216

Երիտասարդ Ընտանիքին Աստուածաշունչը

Արարական Մոցի Աստուածաշունչի ընկերության նախաձեռնությամբ Համազգայինի «Վահէ Այնթապ» տարա- նէն 2017-ին լոյս տեսաւ «Երիտասարդ ընտանիքին Աստուածաշունչը»։ Շա- րագրութիւն՝ էտա եւ Հորսգ Քէյլ, հայե- րէն շարագրութիւն՝ Արտա Ճէպէճեան։ Գիրքը բաղկացած է 199 էջերէ եւ 20 գլուխներէ եւ պատկերազարդ է. գծագ- րիչն է Մէլըն Պրիսուալը։

Առաջին գլուխը «Փրկիչը ծնաւ», կ'ընդգրկէ քանի մը պատմութիւն՝ հրեշ- տակը եւ Ջաքարիան, Մարիամ եւ հրեշ- տակը, Մարիամ եւ Եղիսաբէթ, Յովհան- նէսի ծնունդը, Յիսուսի ծնունդը, հովիւ- ները Բեթղեհէմի մէջ եւ Յիսուս տաճա- րին մէջ։

Երկրորդ գլուխը «Իսրայէլացիները Եգիպտոսի մէջ», կ'ընդգրկէ իսրայէ- լացիներուն չարչարանքները, Մովսէսին մանկութիւնը եւ անձը անոր, փախուս- տը Մադիամ, իսրայէլացիներուն ցաւը եւ Եգիպտոսի պատիժները։

Երրորդ գլուխը «Ստրկութենէն ազատութիւն», կը պատմուին հետեւեալ դրուագները. իսրայէլացիները կարմիր ծովուն մէջ, մանանայ եւ լորամարգիներ, յայտնութիւն՝ լերան վրայ, տասը պատ- ուիրանները, ոսկիէ հորթը, Աստուած եւ Մովսէս, եւ Մովսէսի մահը։

Չորրորդ գլուխը ստեղծագործու- թեան պատմութիւններն են՝ Աստուած կը ստեղծէ երկինքն ու երկիրը, Աստուած կը ստեղծէ մարդը, դրախտի բնակիչնե- րը, մարդը կը փախաքի Աստուծոյ նմա- նիլ, Կայէն կը սպաննէ իր եղբայրը Աբել, Նոյեան տապանը եւ Բաբելոնի աշտա- րակը։

Հինգերորդ գլուխը Աբրահամ եւ Իսահակն են, ուր կը պատմուին՝ Յիսուս տաճարին մէջ, Աբրահամ Քանանի մէջ, Աբրահամի եւ Դովոսի բաժանումը, այ- ցելութիւն Մամբրէի կաղնիներուն, Աստուած կը փորձէ Աբրահամը, Իսահակ եւ Իերեկա եւ անոնց ամուսնութիւնը։

Վեցերորդ գլուխը Յակոբ եւ Նաւ եղբայրներու պատմութիւններն են, Յա- կոբի առջինեկութիւնը, Իսահակ կ'որհնէ Յակոբը, Նաւ եւ Յակոբ, Յակոբի երա- զը, Լիա եւ Ռաբէլ քոյրերը, Յակոբի գո-

տեմարար եւ հաշտութիւնը Նաւի հետ։

Եօթներորդ գլուխը կառավարիչ Յովսէփի դրուագներն են՝ Յովսէփին երազները, Յովսէփի եգիպտոսի մէջ, Յով- սէփի եւ Պետափրէսին կիրնը, Յովսէփի բանտին մէջ, Յովսէփի եւ թագաւորին երազները, Յովսէփի՝ Եգիպտոսի կառա- վարիչ եւ Յովսէփի միացումը եղբայր- ներուն։

Ութերորդ գլուխը «Դաւիթ՝ հովիւ եւ թագաւոր» կ'ընդգրկէ հետեւեալ դրուագները. Դաւիթ թագաւոր, Դաւիթ եւ Գողիաթ, Դաւիթի յաղթանակը Գողի- աթի դէմ, Դաւիթին մեծ սխալը, Նաթան եւ Դաւիթ եւ Սողոմոնին որոշումը։

Իններորդ գլուխը՝ Յիսուս կը սկսի իր առաքելութեան, կ'ընդգրկէ հետեւ- եալ դրուագները. Յովհաննէս Մկրտիչ, Յիսուսի մկրտութիւնը, Յիսուսի փոր- ձութիւնը, Յիսուսի աշակերտները, Յի- սուս իր ծննդավայրին մէջ, խուլ ու համր մարդու մը բժշկութիւնը եւ աղջ- կայ մը վերակենդանացումը։


Տասներորդ գլուխը Յիսուսի առակներն են՝ սերմին առակը, փոքր որդին, երէց որդին, բարի սամարացին, մեծ ընթրիքը, չնեղող ծառան եւ տուն շինողները։

Տասնմէկերորդ գլուխը Յովնան մարգարէն եւ մեծ ձուկն են՝ ծառը եւ անոր պտուղը, Յովնան Նինուէի մէջ, թուզի ծառը եւ հարկահաւաք Ջաքէոսը։

Տասներկրորդ գլուխը կը խօսի Յի- սուսի հրաշքներուն մասին. Յիսուս Գեննեսարէթի ծովափին, փոթորիկը, հինգ հաց եւ երկու ձուկ, սերմնացանը, այլի կիրնը եւ Յիսուսի սէրը մանուկնե- րուն հանդէպ։

Տասներորդ գլուխը՝ Յիսուս հիւանդներ կը բժշկէ. կնոջ բժշկութիւնը, կոյր Բարտիմէոսին բժշկութիւնը, բժշկութիւն մը շաբաթ օրը, տասը բո- ռոտներու բժշկութիւնը, անդամալոյծ մարդուն բժշկութիւնը, չար հոգիէն բռնուած մարդուն բժշկութիւնը եւ բժշկութիւն Բեթեզդա աւազանին քով։

Տասնչորրորդ գլուխը՝ Եղիա մար- գարէն եւ Աքաաթ թագաւորը. Պետրոսի խոստովանութիւնը, մարգարէն թագա-ւորին դէմ, Աստուծոյ դատաստանը,



Էսգա եւ Գորսոյ Բէյլ Մէրցն Պրիսուալը

Եղիա՝ Քորեբ լերան վրայ, Նաբոլթի այ- գին, Եղիա եւ Եղիսէ եւ լերան վրայ փորձառութիւնը։

Տասնհինգերորդ գլուխը թագաւո- րութեան պատգամն է՝ հետեւեալ դրուագներով. հարուստ երիտասարդը, անխելք հարուստը, Ղազարոս եւ հա- րուստ մարդը, թուշուներուն դասը, ինչպէս լաւ տնտես ըլլալ, ժողովուրդը եւ փարիսեցիները եւ արտին մէջ աշխատող- ները։

Տասնվեցերորդ գլուխը՝ Յիսուս Երուսաղէմի մէջ, կ'ընդգրկէ հետեւեալ դրուագները՝ շաբաթ օրուան հացը, իշ- խանութեան հարցը, Յիսուս եւ մեղաւոր մարդը, Յիսուս Երուսաղէմի եւ Բեթան- իոյ մէջ եւ վերջին ընթրիքը։

Տասնեօթերորդ գլուխը կը խօսի Յիսուսի չարչարանքներուն եւ մահուան մասին. Յիսուս Գեթսեմանիի պարտէզին

մէջ, Անոր ձերբակալութիւնը, քահանա- յապետին եւ Պիղատոսին առջեւ եւ մահը խաչին վրայ։

Տասնութերորդ գլուխը Յիսուսի Յարութիւնն է, Ջատիկի օրը, Մարիամ Մագդաղենացին, էմմաուսի աշակերտ- ները, Թովմասի խոստովանութիւնը, Յի- սուս գետեղբայրին մօտ եւ Յիսուս աշա- կերտները աշխարհ կը դրկէ։

Տասնիններորդ գլուխը՝ Յիսուս կը դործէ իր հոգիին միջոցով. Պենտեկոստէի հրաշքը, անդամալոյծին բժշկութիւնը, առաքելներուն հալածանքը, Ստեփա- նոսի քարկծումը եւ ափրիկեցիին մկրտութիւնը։

Քսաներորդ գլուխը՝ Յիսուսի պատգամներուն տարածումը եւ Պողոսի դարձը եւ առաքելութիւնը։

ԱՍՊԵՏ ՄԱՆԺԻԿԵԱՆ

CIBC Aline Shnorhokian Mortgage Advisor Tel: 1 866 231-8876 Fax: 450 688-7555 Cell: 514 797-1375 aline.shnorhokian@cibc.com

Albert Arkilianian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker aarkilianian@sutton.com Cell: 514.962.8822

Nissan Gabriel Véhicules d'occasion Certifiés Kevork Asadourian Directeur des ventes - usagé Sales Manager - Pre-Owned kasadourian@gabriel.ca

École De Conduite AZIG Driving School Tel: 514-336-1110

Natalie Skaff, CPA, CGA Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant nat.skaff@gmail.com

Nazareth Classic Grill 550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064

Samuel Topalian 450 682-1644 Auto Samson Mécanique Générale - Remorquage Service de Pneus Mise au Point 4700 Boul. Samson, Chomedey Laval, QC.

Hayk Hartounian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker C 514.574.6162 B 514.333.3000

Nettoyeur Marie-Claire Cueillette et livraison gratuite à domicile et au bureau (Montréal et Laval) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

ԳՐԱԻՈՒԱՄ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Համագրայինի 90 ամեակի ձեռնարկներ՝
Մոնթրեալ 14 Հոկտեմբեր 2018
Թորոնթո 27 եւ 28 Հոկտեմբեր 2018
Կը խնդրուի չխաչածել

ՄՈՒԹՐԷԱԼ

Համագրային Սանահին մասնաճիւղի «Պետրոս Աղամբան» բատերախումբ
ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿ
3-4 Նոյեմբեր 2018
Մանրամասնութիւնները յետագային:

ՀՀ Հիմնադրամ Մոնթրեալ
Տարեկան ձեռնարկ
24 Նոյեմբեր 2018

ՀՄԸՄ ԼԱԻԱԼ

ՀՄԸՄ Գանատայի Ծրջանի 48-րդ Մարզական խաղեր
Լաւալ 2018
Նուիրուած ՀՄԸՄ-ի Հիմնադրութեան 100-ամեակին
31 Օգոստոսէն - Սեպտեմբեր 3, 2018

ԲԱՐԻ ԱՊԱՔԻՆՈՒՄ

ՀՅԴ «Սարգիս Զէյթլեան» կոմիտէն բարի ապափնում կը մաղթ
ընկ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ:

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

ՀՅԴ «Սարգիս Զէյթլեան» Կոմիտէն ցաւակցութիւն կը յայտնէ Պէ-
յիֆեան ընտանիքին, ընկեր ԱՆԴՐԱՆԻԿ ՊԷՕՅԻՔԵԱՆԻ մահուան տխուր առ-
բիւ:

ՄԱՀԱՋԴ

Տիար Արթուր Պէօյիւբեան, Տիար
Շանթ Պէօյիւբեան, Տ. եւ Տ. Արման, Թանիա
Պէօյիւբեան, դուստր՝ Ալիս, Տիկ. Աշիլէն Հա-
մամբեան, Տ. եւ Տ. Միհրան, Վերա Պէօյիւբե-
ան, գլխ., Օրդ. Շաֆէ Հացագործեան, Տիկ.
Հուրի Տէֆրմէնեան, գլխ., Տիար Արա Հա-
ցագործեան նաեւ համայն Պէօյիւբեան, Հա-
ցագործեան, Համամբեան, Պալասանեան,
Թօփախեան, Տէֆրմէնեան, Թորիկեան, Յէ-
պէնեան, Ակոբեան եւ Պապիկեան ընտա-
նիքներ խոր ցաւով կը գուժեն մահը իրենց
հոր, մեծ հոր, եղբոր եւ հարազատին՝ **ԱՆԴ-
ՐԱՆԻԿ ՊԷՕՅԻՔԵԱՆԻ** (Ծնած 1941-ին, ՀԱՅ-
ՖԱ) որ պատահեցաւ Չորեքշաբթի, 9 Մա-
յիս 2018-ին: Տան Կարգը տեղի ունեցաւ Կի-
րակի, 13 Մայիս 2018-ին, եկեղեցւոյ կարգը տեղի ունեցաւ Երկուշաբթի 14
Մայիս 2018-ին Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ մէջ:



 Այցելեցէք Ս. Յակոբ Առաջ. Մայր եկեղեցւոյ
Կիրակնօրեայ դպրոցի կայքէջը՝
www.sourphagop.org

 **Ձեր բոլոր ճամբորդական
Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676**

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
**ԼԱԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**
PERMIS DE QUÉBEC
3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

 **Հորիզոն**

**«Հորիզոն» շաբաթաթերթի 2018 թուականի
վարժողական ծրագիր**

Գանատայի աշխատանքի եւ ընկերային զարգացման պետական բաժանմունքին
կողմէ տրամադրուած յատուկ ֆոնտով, «Հորիզոն» շաբաթաթերթը այս տարի կը
նախաձեռնէ ուսանողական վարժողական ծրագիր:

Աշխատանքի մանրամասնութիւններ
- «Հորիզոն»-ի ամենօրեայ խմբագրական աշխատանքներու ծիրէն ներս
թարգմանութիւններ կատարել, անգլերէն, հայերէն եւ ֆրանսերէն լեզուներով:
- Գաղութային ծեռնարկներու թղթակցութիւններ կատարել:
- Հարցախոյզներ կազմակերպել:
- «Հորիզոն»-ի վարչական աշխատանքներուն օգնել:
- Բաժանորդագրութիւններու գործընթացը հետապնդել:
- Արխիւներ դասատրել:

Պայմաններ
- Թեկնածուն 15-30 տարեկան, երկրորդական վարժարանի, Cegep-ի կամ
համալսարանի ուսանող պէտք է ըլլայ:
- Պէտք է լիաժամ ուսանող ըլլայ, որ վարժողական ծրագրէն ետք վերստին իր
ուսումը շարունակէ:
- Պէտք է Գանատայի քաղաքացի, մնայուն բնակիչ, կամ Immigration and Refugee
Protection Act-ի օրէնքներով սահմանուած ապաստանեալ (Refugee) ըլլայ:
- Պէտք է աշխատելու իրաւունք ունենայ:

Աշխատանքի տեսողութիւն եւ վարձատրութիւն
- Վարժողական այս ծրագրի դիմումները կը սկսին Մայիս 1-ին: Ծրագիրը կը սկսի
Յունիս 18-ին եւ կ'աւարտի Յուլիս 27-ին:
- Ծրագրի տեսողութիւնն է 6 շաբաթ, շաբաթական 30 ժամ աշխատանքային
ժամով եւ 12.00 տողար ժամական վարձատրութեամբ:

Ձեր դիմումագրերը ուղարկեցէք «Հորիզոն»-ի հասցէին մինչեւ Յունիս 8
3401 Olivar-Asselin, Montreal, Quebec, Canada H4J 1L5
Կամ ե-նամակով ուղարկել «Հորիզոն»-ի վարչական պատասխանատու
Սիլվա Էրամճեանի հասցէին՝ sylva@horizonweekly.ca

ALINE BEKEREJIAN
NOTAIRE • NOTARY
ՆՈՏԱՐ Ալին Պէքերճեան

Achat	Առեւտուր	Purchase
Hypothèque	Անշարժ Կալուածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսատրում	Refinance
Mandat	Պատուիր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կալուածք	Estate
Marriage	Ամուսնութիւն	Marriage
Procuratoin	Փոխանորդագիր	Power of Attorney

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5
T 514.382.7222
F 514.381.1818
aline.b@notarius.net
www.abnotaires.com

Շաապութիւնները կը մատուցուին Արաբերէն,
Հայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais
Services offered in Arabic, Armenian, French and English.

horizon
HORIZON
Hebdomadaire arménien
Armenian Weekly
Publié par / Published by
Les Publications Arméniennes
(1991)
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

**Abonnement annuel /
Yearly subscription
Canada**
2^e classe - 2nd class: \$80
plus applicable taxes
1^{re} classe - 1st class: \$95
États-Unis / USA
1^{re} classe - 1st class: \$95 US
Ailleurs / Elsewhere
1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
Sylva Eshramdjian-Bachekjian
(General Manager)
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail: sylva@horizonweekly.ca
Courier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales
du Québec et du Canada - ISSN 0708580X

Գրիգոր Հորոյեան, (416) 494-1921
Ժագ Վարպետեան, (416) 722-9225

Վարչի Խմբագիր՝
Վահագն Գարագաշեան
Վարչական պատասխանատու՝
Սիլվա Պաշոգճեան
Քարտուղար՝ Մարինա
Տէր Խաչատուրեան
Աագ խմբագիր՝
Վրէժ-Արմէն Արքիմեան
Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Արքա-
համեան, Թինա Սիլվահեան
Չեւատրում՝ Նէմսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնա Թիթիգեան

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայր Թաշճեան, Իշխան Ղազարեան, Վազգէն Տէկիրմէնքաշ

Financé par le
gouvernement
du Canada
Funded by the
Government
of Canada

Canada

ԱՍՏՂԱԳՈՒԾԱԿ



ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ) - Ռոմանթիկ շաբաթ մը պիտի ունենաս: Հետեւաբար փորձէ բոլոր խոչընդոտները վերացնել եւ սիրեցեալիդ հետ հաճելի պահեր ապրիլ՝ հեռու առօրեայի տաղտուկէն եւ իրարանցումէն: Ծակաւտագրական որոշումներու շաբաթ մը պիտի ըլլայ:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) - Դուն քաջատեղեակ ես, որ յամառութիւնը միշտ կը վնասէ սիրային յարաբերութեանդ: Կը սիրես միշտ քու կարծիքդ պարտադրել եւ իշխող հանդիսանալ: Այս մէկը պատճառ կը դառնայ ձեր միջեւ անհամաձայնութիւններու, հետեւաբար աւելի հասկացողութիւն ցուցաբեր:

ԵՐԿՈՒՐՈՒԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս) - Այս շրջանը շատ նպաստաւոր է մտեցում ցուցաբերելու եւ համերաշխութեամբ գոյակցելու կողակիցիդ հետ: Հակառակ ունեցած անիմաստ տատամսումներուդ պիտի յայտնուի, թէ սիրեցեալդ անհամբեր կը սպասէ, որ դուն ըլլաս նախաբայլը առնողը:

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս) - Բացառիկ շաբաթ մը կը սպասէ քեզ, բոլոր ասպարեզներուն մէջ յաջողութիւն պիտի գտնես, յատկապէս՝ սիրային յարաբերութեան հարցով: Հրաշալի պահեր պիտի ապրիս սիրեցեալիդ հետ, կը թարմանան բոլոր զգացական ապրումներդ:

ԱՌԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս) - Սիրող կը թափայլ սոր եւ զօրաւոր զգացումներով, կարծես կ'ուզես ամբողջ աշխարհը ընդգրկել: Ծաբաթը շատ նպաստաւոր պայմաններ պիտի ստեղծէ քեզի համար՝ ըմբռնելու կեանքն ու բնութեան գեղեցկութիւնները:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) - Փորձէ աւելի համարձակ ըլլալ: Աւելորդ մանրամասնութիւններով մի՛ գբադիր, կարիքը չկայ այդքան դիւրագգաց ըլլալու: Երկմտութիւնը անդին նետէ եւ յառաջացիր յարաբերութեանդ մէջ: Ժամանակ տրամադրէ սիրային կեանքիդ:

ԿԾԻՌԵ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) - Ամպոտ է սիրային կեանքդ այս շրջանին, բախտաբեր չէ այս ժամանակաշրջանը եւ ջղային կը դարձնէ քեզ: Վերջերս հին իրավիճակներ կը պրպտես եւ անիմաստ տեղը կ'անհնազատանաս: Երբեմն անցեալը պէտք է փոշիի տակ ձգել:

ԿՄՐԻԾ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) - Ծառերու կը հանդիպիս, սոր անձնատուութիւններու, որոնք մէջդ սոր զգացումներ կ'արթնցնեն: Եթէ կապուած չես եւ սիրոյ ծարաւը կը զգաս, այս շաբաթ անպայման պիտի հանդիպիս երկրորդ կեսիդ եւ հաւանաբար շուտով լուրջ քայլ մը առնելու որոշում առնես:

ԱՐԵՂԱՎՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) - Դժուարութիւն ունիս սիրեցեալիդ հետ հասկցուելու, կը մեղադրես զինք անտարբերութեան եւ սառնասրտութեան, նոյնիսկ անտեսումի համար: Բուռն վեճեր կը ծագին, բայց այս բոլորին հիմնական դրդապատճառը քու անկայուն վիճակդ է:

ԱՅԾԵՂՁԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) - Ծուարած ես այս շաբաթ, հարցումներու տարափ մը կը տողանցէ մտքիդ մէջ եւ կը բարչրկէ քեզ: Սիրեցեալիդ հետ յաճախ բախումներ պիտի ունենաս, սակայն մի՛ մտահոգուիր, կեանքի ընկերոջ պիտի փորձէ չափազանց հասկացողութիւն ցուցաբերել:

ԾՈՎԱԼՈՅԾ (21 Յունուարէն 19 Փետրուար) - Աշխոյժ ես այս շաբաթ եւ կենսուրախ: Ծուրջիներդ վերջապէս պիտի գնահատես քու գեղեցիկ ներաշխարհիդ, բարիութիւնը եւ հրաշալի բնատուրութիւնը: Զիչ մը հոգ տանելու եւ արտաքին գեղեցկութեանդ, արտաքինը ներքինը թափանցող հայելին է:

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) - Ձերմ հանդիպում մը պիտի ունենաս, որ հին, խամրած եւ մոռցուած զգացում մը պիտի արթնցնէ մէջդ: Այս հանդիպումը պիտի փոխէ ամբողջ կեանքի ուղիդ: Ծուրջիներուդ հետաքրքրութեան առարկայ պիտի դառնաս:

Ս. ԱՍՏՈՒԱԾԱՄԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ, ԹՈՐՈՒՅ
 Ճորձ եւ Մէրի Թոնանեան 100
 Նանսի Համբարեան 25
 Արմէն եւ Սօֆի Մելիքեան 200
 Արշ Թօփճեան 30
 Արմէն եւ Մարալ Գարրիէլեան 20
 Յակոբ եւ Հոփիմէ Գասարեան 25
 Մարոն եւ Մարիման Զաւթար 40
 Մարի Տարազեան 45
 Վօլգա եւ Սեւան Մարկարտեան 40
 Կարօ եւ Սիլվա Սապուհեան 500
 Զուարթ Պօղոսեան 50
 Արփի Սալպեան 20
 Անի եւ Ալին Ալիպեան 30
 Յասմիկ Պոյանեան 50
 Լեւոն եւ Զուարթ Աճէմեան 60
 Կասիա Մուրատ 50
 Յակոբ եւ Սիլիւս Մայտոսեան 20
 Անահիտ Սափայեան 20
 Արթուր Թորոնթ 20
 Մուշեղ Բարսեղեան 20
 Ղազարոս Ղազար 20
 Սօսիկ Օհանեան 20
 Աննա Տարազեան 50
 Պօղոս եւ Մարալ Տաննազեան 40
 Զարիկ Մեծարդ 30
 Ռաժակ Գույումճեան 20
 Վիտլիք Մարկոսեան 100
 Եփրատուհի Ստեփանեան 20
 Յարութ եւ Սեղա Գասապեան 50
 Զաքարեան Բոյրբեր 30
 Ռաֆֆի եւ Նորա Սարգիսեան 100
 Գէորգ եւ Մէրի Սազարեան 25
 Վարանդ եւ Մատէն Մովսէսեան 60
 Քերի եւ Անի Աշքեան 100
 Սիլվա Ղազարեան 20
 Ժիլիք Սարգիսեան 20
 Վաչէ Տէմիրճեան 20
 Տէր եւ Տիկ. Կարապետ Պաքալեան 50
 Հրայր եւ Մակի Պօղոսեան 20
 Արա Սարգիս 50
 Պետրոս եւ Թագուհի Զանսոգեան 25
 Անժէլ Բարսեղեան 25
 Հրանդ եւ Լուսին Պապանեան 50
 Սահակ եւ Արաքսի Ռարճեան 20
 Վարդան Օնայեան 150
 Նազիկ Եւուէֆ 50
Գրեզոր Հոթնիկեանի շուտափոյթ ապաքինման Ծամար
 Զարուհի Հաւրճեան 50
Զուրուկեան Արփիմէ-ի 40-ջին
 Արա եւ Յասմիկ Պետրոսեան 50
 Անտ եւ Սեւան Պետրոսեան 50
 Հայկ եւ Լարիսա Պետրոսեան 50
 Հրայր եւ Տիանա Եւուէֆեան 50
Լիպարեան Կարապիտ Հոգւոյն
 Յակոբ եւ Լեւն Լիպարեան 20
Փափաղեան Յակոբի եւ Ազատուհի-ի մահուան առթիւ
 Յարութ եւ Նինա Կարապետեան 30
 Տէվիտ եւ Թանիա Կէլշո 25
Միլեդեան Վարաստատի Հոգւոյն
 Յարութ եւ Ստաա Միլեդեան 20
Գարաաբաբեան Մովսէսի եւ Նուարդի
Կարանեան Սամուէլի եւ Ովանանի-ի Հոգիներուն
 Պետրոս Գարասարգիսեան եւ Ընտանիք 25

Լիլի Մարգարեան, գլխ. 100
 Բօզին Պոտոսեան, գլխ. 100
 Էլիզ Պոյանեան 100
 Մայտա Պոյանեան 50
 Վիզէն Պոյանեան, ձկնիփղը Լի 50
Վերթին Պոյանեանի Ա. տարեկիցին
 Սոնիա Ռաչատուրեան 200
 Էլիզ Պոյանեան 100
 Լիլի Մարգարեան, գլխ. 100
 Բօզին Պոտոսեան, գլխ. 100
 Մայտա Պոյանեան 50
 Վիզէն Պոյանեան, ձկնիփղը Լի 50
Արա Օլթանեանի 25-րդ տարեկիցին
 Մաքրուհի Օլթանեան, գլխ., թոռներ 150
 Սիրվարդ Զուրիկեան 30
Գրեզոր Յակոբեանի 12-րդ տարեկիցին, նաեւ Թորոնթ, Մարի Փափաղեաններուն Հոգւոյ
 Շաքէ Յակոբեան 100
 Մասինո, Անայիս Գարբուսո, գլխ. 30
 Յովիկ, Սեղա Գաթարոյեան 30
 Արսէն, Աստղիկ Մարաշլեան 25
 Սուպանեան ընտք. 20
Մարտիրոս, Ազնի Յակոբեաններուն Հոգւոյ, Յակոբեան, Սթանպուլեան զերբաստանաց ննջեցւոց
 Յովիկ, Սեղա Գաթարոյեան, գլխ., թոռներ 50
 Մասինո, Անայիս Գարբուսո, գլխ. 50
 Շաքէ Յակոբեան 20
Մարի Ղազարեանի Ա. տարեկիցին, Մարգիտ Ղազարեանի 25-րդ տարեկիցին
 Ս. եւ Տ. Նարեկ Ղազարեան, Մարի Ժալոտ 50
 Ս. եւ Տ. Ներսէս Ղազարեան, գլխ. 50
 Ս. եւ Տ. Սեւակ Ղազարեան, գլխ. 50
 Սիլիւ, Սեղա Կարապիլ, գլխ. 25
 Արա, Անի, Կարին Օհանեան 50
 Յակոբ, Սեւան Ռշիշեան, գլխ. 50
 Նազո, Վարսենիկ Ռաշիշեան 30
 Ս. եւ Տ. Հրայր Տժգունեան, Արա 20
 Կարօ, Ռուպի Տժգունեան 20
 Ս. եւ Տ. Անտիա Սարգիսեան, գլխ., Ալիս Սարգիսեան 60
 Յարութ, Նորա Հաջարօրճեան 25
Սիլիւսի Թուփի Ա. տարեկիցին, նաեւ Արշալույս Մանտալեան Թուփի 39-րդ տարեկիցին
 Ռաֆֆի, Անիթա Արանեան, գլխ. 100
 Տանիթ, Քրիսթին Թուփի, գլխ. 300
 Ս. եւ Տ. Գրօ Արանեան 40
 Պեճ, Նայիրի Զաքրճեան 100
 Նորայր, Վարդուկ Պեզճեան 50
 Կարէն, Բարէն Զաքրճեան 100
 Յասմիկ Տատալեան 100
 Ս. եւ Տ. Յարութիւն Կիրակոսեան 100
 Մայք, Գարին Կիրակոսեան 250
 Մովիկ Շահինեան, դուստր՝ Մարիա 20
 Աննա, Յակոբ Պուկարեան 50
 Բարգէն, Արմինէ Կարապետեան, գլխ. 150
 Ժազ, Սիւզան Սահակեան 100
 Ս. եւ Տ. Գէորդ Գույումճեան 100
 Յակոբ, Անահիտ Տէր Ռաչատուրեան 50
Սեղա Կիւլէսէրեան Աղազարեանի Ա. տարեկիցին, Վերթին Գույումճեանի Հոգւոյն
 Ս. եւ Տ. Գէորդ Գույումճեան, գլխ. 20
 Ս. եւ Տ. Անտիա Նահապետեան 20
 Ս. եւ Տ. Պօղոս Նահապետեան 60
 Ալիս Կիւլէսէրեան 20
 Տիգրանուհի Պարսեմեան 20
 Ս. եւ Տ. Անտիա Պարտոյեան 20
 Վարդգէս, Արաքսի Նահապետեան 10
Նուարդ Տէր Ներսէսեանի Ա. տարեկիցին
 Յակոբ, Սեւան Ռշիշեան, գլխ. 50
Զօհրապ Գէորգեանի 9-րդ տարեկիցին
 Ալտա, Կարօ Գէորգեան 40
Վարդան Թիմուրեանի 5-րդ տարեկիցին
 Անիթա Թիմուրեան, գլխ. 20
Միկրոէլ Սուպանեանի 40-ին, Շաքէ Սուպանեանի Հոգւոյն
 Անտիա, Անահիտ Սուպանեան, Մայքը, Նէնսի Սուպանեան, Արա Սուպանեան, Մեկանի Սուպանեան 50
 Արսէն, Աստղիկ Մարաշլեան 25
 Ալեքս, Ալիս Արապեան 50
 Անի Սեդրեան Արապեան 60
 Յովհաննէս, Յասմիկ Պէքէրեան, գլխ. 50
 Շաքէ Յակոբեան 30
 Վարդան, Կարինէ Վանկեան 20
 Մարիօ, Անայիս Գարբուսո, գլխ. 20
 Սոնա Պէքէրեան, գլխ. 20
Բօզ Սարգսեանի մահուան առթիւ
 Անտիա, Անահիտ Սուպանեան 50
 Ս. եւ Տ. Ժիրայր Ռուբրեան 40
 Ս. եւ Տ. Վիզէն Յովսէփեան 40
 Սոնիա Էջիգեան 20
Արաքս Աքթիարեանի Ա. տարեկիցին
 Արա, Բօզին, Անանտա Պասանեան, Ճորձ Աքթիարեան 100
Յարութիւն Արապաղեանի 7-րդ տարեկիցին, Արապաղեան, Ռաչատուրեան, Մինասեան զերբաստանաց ննջեցւոց
 Անահիտ Արապաղեան 50
Մանուէլ, Ալտա Մահաբէճեաններուն Հոգւոյ
 Անահիտ Արապաղեան 50
Միլանի Գուլթիանեան Արանեանի 18-րդ տարեկիցին
 Նատիա Գուլթիանեան 50
 Կարօ, Սիլվիա Նազիբկանեան, գլխ., թոռներ 100
 Գրօ, Անի Արանեան 40
 Սեւան, Ալիք Արանեան 50
 Վարդան, Նորա Գարսաէֆէրեան 50

ՀՕՄ... Սկիզբը էջ 3

զարդասեղներ ստացան ընկերուհիներ՝ Անի Պապիկեան, Թոզ Պալապանեան, Գարմէն Շահինեան, Նայիրի Զաքրճեան, Մարի Պոսթաճեան, Նորա Կէօնեան եւ Մարալ Դերձակեան, ինչպէս նաեւ 25 տարուան իրենց անդամակցութեան համար զարդասեղ ստացան ընկերուհիներ՝ Վարդուկ Պեզճեան եւ Լեւնա Գատեան: Ընկճ. Լիւսի Շահինեան եւ ընկ. Հուրի Զաքարեան փոխանցեցին զարդասեղները:

35-ամեայ անդամակցութեան համար զարդասեղ ստացող ընկերուհիներն են Նորմա Արզումանեան, Հիլտա Գալապանեան, Վանտա Քէօսէեան եւ Շաքէ Միխիլեան: Երջանային վարչութեան անդամ ընկերուհիներ Վարդուկ Պեզճեան եւ Անի Գրայեան յանձնեցին զարդասեղները:

Ընկճ. Մարալ Յովսէփեան կարգաց ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան կողմէ առաքուած յատուկ զնահատագրերը, որոնք յանձնուեցան 50 տարուան անդամակցութիւն ունեցող ընկերուհիներուն՝ Զեփիւռ Քէսէրեան Լուլուի, Շաքէ Կէօնեանի, Պերճուհի Քէշիշեանի, Սեղա Թուրիկեանի, Արշօ Պոյանեանի եւ Յասմիկ Մինասեանի: Գնահատագրերը փոխանցեց Գանատայի Շըլ. վարչութեան ատենապետուհի ընկ. Անի Օհանեան:

Շըլ. վարչութեան ատենապետ ընկ. Անի Օհանեան 60 տարուան անդամակցութիւն ունեցող ընկերուհիներուն՝ Ալիս Դաւիթեանի, Աշխէն Հաջարօրճեանի, Անժէլ Գաթարոյեանի, Սուլթան Փալանեանի եւ Սիլվա Սայլըքի, յանձնեց Շըջանային վարչութեան զնահատագրերը:

Ընկճ. Նորա Կէօնեանի ՀՕՄ-էն ներս 15 տարիներու անդամակցութեան առթիւ ընկճ. Շաքէ Կէօնեան կը հիմնէ «Նորա Կէօնեան ֆոնդ»՝ նուիրելով 10,000 տոլար ՀՕՄ-ի Գանատայի Շըջանային վարչութեան:

Ընկճ. Լիլիկ յայտարարեց 60-ամեակի առթիւ կատարուած յատուկ նուիրատուութիւնները: Նուիրատուներն են տէր եւ տիկին Մայք եւ Գարին Կիրակոսեանները, որոնք կը նուիրեն 10,000 տոլար, տէր եւ տիկին Արա եւ Փաթրիսիա Կիրակոսեան՝ 1,000 տոլար՝ ի յիշատակ իրենց մեծ մոր՝ Հիմնադիր վարչական անդամ ընկճ. Մարի Առաքելեանի: Եղան նաեւ 1000 տոլարի նուիրատուութիւններ՝ ընկճ. Սիլվա Սայլըքի, տիար Արեգ եւ ընկճ. Քրիստին Մարգարեանի (ի յիշատակ իրենց մոր՝ Հիմնադիր վարչական անդամ ընկերուհի Արաքսի Պոյանեան Այնթապեանի), ընկճ. Շաքէ Կէօնեանի, տէր եւ տիկին Շանի եւ Քրիստին Թուփի, ընկճ. Նորա Կէօնեանի, տիար Արթօ եւ ընկճ. Ալիս Մարգարեանի, տիար Դրոյի եւ ընկճ. Աննա Փիլիկեանի, ՀՕՄ-ի Գանատայի Շըջանային վարչութեան եւ ՀՕՄ-ի Լաւալի Շուշի մասնաճիւղին կողմէ:

Յատուկ շնորհակալութեան խօսք ուղղուեցաւ ձեռնարկի նախագահուհի ընկճ. Սիլվա Սայլըքին, օրուան պատգամաբեր ընկճ. դոկտ. Լալէ Մանճիկեան Եսփուճեանին, ընկճ. Քրիսթին Այնթապեան Մարգարեանին, ընկճ. Էլիզ Պօղոսեանին, ընկճ. Հուրի Հէքիմեանին, պրն. Սեթ Եսայեանին, պրն. Արմէն Ալէմեանին, պրն. Նորայր Պեզճեանին, տիկ. Արաքս Տուճեանին, պրն. Արա Էքմէքեանին եւ 60-ամեակի կազմակերպիչ յանձնարարներին անդամ ընկերուհիներուն՝ Արմինէ Կարապետեանի, Մարօ Ֆոռուճեանի, Աննա Պուկարեանի, Անի Պապիկեանի, Վանին Գապասապալեանի, Արուս Էհրամեանի, Տիրուկ Մանճիկեանի, Զեփիւռ Ասատուրեանի, Անի Թաշճեանի, Սեղա Մալխասեանի, Մարալ Դերձակեանի եւ վարչական ներկայացուցիչ ընկճ. Լիւսի Շահինեանի:

Ձեռնարկի աւարտին Տէր Գառնիկ Քճն. Գոյունեան ընթերցեց Գերաշնորհ Տէր Բարգէն Արք. Զարեանի կողմէ այս առթիւ տրուած «Գիր Օրհնութեան»ը, որմէ ետք Սրբազան Հայրը փոխանցեց իր սրտի խօսքը, որուն մէջ յիշեց, թէ մեծ յարգանքի արժանի են Մոնթրէլի մասնաճիւղի Հիմնադիրները, եւ շեշտեց, թէ Հիմա Հերթը յաջորդող սերունդներուն է, որոնք պիտի շարունակեն նախնիներուն գործը՝ ծառայութիւն մատուցելով կրթական, մարզասիրական ու Հայրենասիրական գործունէութեամբ՝ յանուն Հայ ազգին ու կրօնքին:

Ձեռնարկի փակումէն ետք ներկաները ուղղուեցան «Հանճեթեան» մարզասրահ, ուր տեղի ունեցաւ 60-ամեակի մոմավառութիւն եւ հիւրասիրութիւն:

Զեփիւռ Ասատուրեան



MARCHE POUR L'HUMANITÉ ET LA PRÉVENTION DES GÉNOCIDES

3 JUIN 2018

DÉBUT

12 h 30 – Square Cabot

Coin Atwater et Ste-Catherine (Métro Atwater)

Fin: Place du Canada, Coin Peel et René-Lévesque
(Métro Bonaventure)



LE COMITÉ UNIFIÉ DES ORGANISATIONS
ARMÉNIENNES DU QUÉBEC

Nous disons NON aux génocides!

#M4H

@MTL_M4H marchepourhumanite





BARRY



KAREN



GARO

KAZANDJIAN



514
333-3000


DEMANDEZ UNE ÉVALUATION GRATUITE



À VENDRE 399 000 \$



À VENDRE 1 475 000\$
ou 5 500\$/mois



À VENDRE 1 395 000 \$



À VENDRE 698 000 \$




À VENDRE 519 000 \$



À VENDRE 798 000 \$



À VENDRE 1 495 000 \$



À VENDRE 798 000 \$



À VENDRE 439 000 \$




À VENDRE 1 995 000 \$



À VENDRE 498 000 \$



À VENDRE 525 000 \$



À VENDRE 369 999 \$



À VENDRE 339 000 \$



À VENDRE 1 198 000 \$

EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

CLASSÉS PARMI LES MEILLEURS COURTIER RE/MAX AU MONDE
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5